Եւ սակայն Անդոնիա շատ լաւ և վաղուց համեմատած էր այդ սէրը: Մինչև անդամ բաւական զարմանալի գտեր էր նորատի զօրականին յետին ծայր զգուշաւոր վարմունքը: Եթէ պատանին աւելի կորովարիթ և նուռազ համեստ լինէր, պիտի կարենար անշուշտ կարգալ այդ զարմանքը նորարոյս օրիորդին ակնարկին մէջ որ մերթ ընդ մերթ իր վրայ կ'դառնար: Եւ իրօք բաւական անհամբերութեամբ կ'զիտէր օրիորդն որ ժամանակն ի զուր կ'անցնէր, այս անորոշ վիճակն անփոփոխ կ'մնար և չէր կարող ըմբռնել այն շարժառիթն որ կ'ստիպէր պատանին քօղարկել խոստովանելի զգացումներ, քանի որ այդ խոստովանութիւնը սրտազին պիտի ընդունուէր: Միթէ պատանին չչ'ը դդար այս բանը, միթէ չզիտէր որ ուրիշ ու է մահկանացու մը իր վրայ իրաւունքներ չունէր քան ինք: Ուստի նրբ պիտի որոշէր արդեօք իր հօրը խօսելու: Միթէ հարկ էր սպասել որ անակնկալ պարագայ մը դար բանար յամառութեամբ գոցած աշքն և անոր ցոյց տալով որ իր յայտարարութիւնը սիրայօժար պիտի ընդունուէր, ստիպէր զինք խզելու երկարատև լրութիւն մը: Եւ միթէ ինք շատ մեղաւոր և պատշաճից դէմ գործած պիտի լինէր, եթէ իր կողմէն, որքան որ հնար էր անզդալի կերպով, օգնէր այդ պարագան, որ կրնար ուշանալ, յառաջ բերելու:

Նորատի օրիորդին այս խորհրդածութիւններն ապարդիւն չմնացին, վասն զի գեղեցիկ օր մը Պէլա իր զգուշաւոր ընթացքը թողլով՝ ստիպուեցաւ խօսելու: Եւ ահա ինչպէս ծագեցաւ այս յիշատակելի դէպքը:

Յուշիս ամսուն՝ Աէօվէնաբէրկի իշխանն իշլ գացած էր իր աղջուան հետ: Այս հիանալի փոքր քաղաքը Սալց-Բամէրկուդի նկարագեղ երկիրը կ'զտնուի, որու բնատուր գեղեցիկութիւնները գեր ի վեր են քան Հէլվէտիոյ ամենէ զմայլելի վայրերը: Ամառը վայելչագեղ ընկերութեան մը ժամավայրն է այս քաղաքը: Այն միջոցին որ երաժշտական խումբը կը նուագէ դաշտավայրի մը վրայ, ծառազարդ ճեմելի մ'որ կ'տարածուի դէպի Դրաուն գետին ափունքը, Վիէննայի ընկերական դասուն ընտրանին կը խռնին անդ ու կ'ձեմեն: Կայսրն ու Կայսրուհին՝ որ անդ սիրուն զիւղատուն մ'ունին դալարածիր, ըստէպ գեղեցիկ եղանակին կ'գան մի քանի օր անցընելու համար, այնպէս որ իրենց ներկայութեամբ նոր հրապոր և ոգեսրութիւն կ'յաւելուն այդ տեղոյն: Ոքանչելի են շրջականներն և գրօսասէր որսորդներու համար արշաւանաց ցանկալի վայրեր ունին: Անդոնիա՝ որու գեղեցկութիւնն առաջին անդամ Լոպքվիչի պալատին լուսասփիւռ սրահին մէջ երեւան ելած օրէն ըզզալի տպաւորութիւն մ'ըրած էր ամենուն վրայ, անգէտու և առանց պչրասիրական հնարից զիմելու, ընտիր ակմրի մը վրայ կ'տիրէր իրբեթագուհի, որու հրամաններուն կ'հնազանդէր կուրօրէն և որու անուամբ կ'երդնար: Նորատի օրի-

որդն իրիկուն մ'որոշեց որ հետևեալ օրն ակումբն չալշղատ երթայ նախաճաշիկ ընելու : Այրուն գիւղ մ'էր այս որ համանուն ակնապարար լճալին ափուն քը շինուած էր : Այս որոշման վրայ կարեոր պատրաստութիւններն եղան : Լումանի՛ որ առջի երեկոյ հասած էր, այդ ձաշին մասնակից պիտի լինէր :

Բազմաթիւ կառքերով կոչնականները փոխադըր-
րուեցան կողառի աղօրին՝ որու ներքեւ կ'առնուին
կանգուն երկար ջրմուղի մը հսկայական սիւները,
ջրմուղ՝ որ հեռուն կ'տանի շրջակայ աղորանին աղի
ջրերը։ Անդ՝ մտան փոքր նաւակներու մէջ զոր կ'ա-
ռաջնորդէր լոկ թիւքար մը։ Լճակին խորունկ ու
մութ ջրերուն վրայ կ'ցոլանային հայերիի պէս Զա-
րըցայնի բարձր ու լերկ սարերն և Բլասէնի աւելի
գեղածիծաղ առապարները։ Կէս ժամու չափ նա-
ւարկելով ուղեղորները կ'հասնին Հալշդատ, որու
տուներն ամփիթատրոնի ձևով իրարու վրայ կ'երե-
ւին, այնպէս որ կարծեա թէ Ճայռերուն օրմերուն
փակած են. իսկ իր մէջէն կ'սահի կ'անցնի զայրացին
ջրերու ահաւոր խոխորջիւնով ջրվէժ մ'որու մէջ կը
թաւալին ձիւնային գնդակներ։

Երբ ցամաք կ'ելնեն՝ ուղևորներուն առաջին գործը կ'ինք գտնել յարմարագոյն վայր ուտեստի պաշտելու տեղաւորելու՝ զոր խոհեմութեամբ միասին բեշաբը են: Ամանք յարմար կ'տեսնեն Խուտօղխօսթրումն, հինաւուրց աշտարակ՝ որ լճակին փրայ կ'նայի և որ երեքտասներորդ դարուն վերջը կառուցուած էր որպէս զի պաշտպանեն աղանձնքն, որոց հարստութիւնը Սալցուրիի եպիսկոպոսաց ընչասիրութիւնը

կ գրգուէին : Այլը նախադաս կ'համարէին վայտպա-
ևի քարավազն՝ որու ջրերը կ'թափին Հալզդատէն քիչ
մը հեռու ամայի ու ճագարածե կրծի մը մէջ :

Անդ ոնիա Վալտապախն ցոյց տուաւ իրբե ամենէ
ընտիր վայրն : Խակոյն ուղևորներն այն կոզմը զիմե-
շին , և հասան՝ բաւական ձիգ և անտառուտ շաւիզ
մը մազլցելով՝ ջրվէծին դիմացը : Շտապաւ մատուցին
քարավագին արժանավայել ակնածական ողջոյնն ,
ապա , ինչ որ մեծագոյն կարևորութիւն ունէր , սա-
պատճերը բացուեցան և պաշարները դրուեցան դա-
լարաւէտ հողին վրայ ի մեծ գոհունակութիւն զրօ-
սասէր խմբակին , որու ախսորժակը զրդուուած էր
այս վերելքի և կծու օդին պատճառաւ :

Անդ գտնւող նորատի աղջկանց մէջ չկար և ոչ
սին որ Անդոնիահ չափ եռանդ և աշխոյժ ցոյց տար
այս զրօնանաց համար։ Իր վարդապոյն ցըթերէն
պայծառ ու զուարթ քահքահներ կ'արձակէր ամեն
վայրկեան՝ ձայն տալով հովտին խորը ննջող արձաւ
քանցներուն և իր ընկերուհեաց աւիւնը զրգուե-
ով։ Պէտք՝ որ կարծես թէ ներկայ կոչնականներու
մէջ զրեթէ բնաւ վոքքիկ կոմսուհեոյն ուշադրու-
թիւնը չէր զրաւեր և որ ի զուր ճգներ էր ընդհա-
սուր զուարթութեան մասնակից լինիլ մեկուսի քա-
ռուելու ստիպուեր էր, մտածելով արտմազին որ ի-
աց արդի վիճակին մէջ հնարին չէր երեւեր խնամու-
թիւն մը հաստատել Լումանի և Լէօվէնալէրկի ընտա-
ռաց մէջ։

Պէլա ելեր էր դալարաւէտ սարաւանդի մը վրայ
որ կ'նայի վերուստ այն վիճն որու մէջ ու զգազիծ

կ՝ հոսոի Վարտավախն որպէս զի որոտածայն հեղեղի
մը ձևն առնու : Իր զիմացը վեհապահն և սպիտա-
կափրփուր կ'թաւալէր ջրվէժն , այնպէս որ իր անկ-
ման վայրը չհասած զրեթէ կ'փոշիանար՝ իրքւ թե-
թև գոլրիւ , կ'զդրդէր մթին կիրճն իր ահեղադոչ-
որոտութիւնով , և տամուկ փոշիով կ'ծածկէր ծա-
ռերու վտակահոս կոճղերն և ապաւաժներու շողշո-
ղուն որմերը : Պէլա՝ ահակնկալ երևման մը առջև
վերջ տուաւ յանկարծ իր մատմուքին :

Անդոնիա իր քովա էր։ Նորատի օրիորդը քիչ մը
հեռու կանգուն կ'երսէր, իր փոքրիկ ոտները դրած
անդունդին վրայ նայող ժայռուտ և նեղ ծնօտի
մ'եղրը, իր երեսը դէպ ի պատանին դարձած էր,
և թէև կ'ժպտէր անոր՝ շրթերը մեղիկ բանալով,
սակայն իր դէմքին վրայ դրեթէ վայրագ խորհուրդ
մը նկարուած էր, և գիմազրաւ կ'նայէր Պէլաի։

Սոսկալի անձնութիւն մը պրկեց երիտասարդին
կողրրղը : Թեթև գայթ՝ մ'որ ընէր, վայրկենական
թալուկ մ'եթէ ունենար օրիորդն՝ իսկոյն պիտի գը-
լորէր, իր աչքէն անտես՝ անդունդին մէջ անհետ
պիտի լինէր : «Անդոնիա, ըսաւ Պէլա աղերսազին
ձայնով և անոր մօտենալու չհամարձակելով, առ
ահի որ ամենաթեթև շարժմամբ հաւասարակըու-
թիւնը չկորուսէ նէ, Անդոնիա, կ'աղաչեմ, կ'պաղա-
տիմ, մի, մի խաղաք վտանգին հետ . . . :

— Ինչու չխաղամ, պատասխանեց օրիորդն առանց տեղին շարժելու, առանց անոր նայելը և ժըպտելէ դադրելու, միթէ ահա հոս չքը զիս ազատելու համար՝ ինչպէս ի Պրուհլ: Երբ երկրորդ անգամ զիս

մահուան ճիրանէն ազատէք, թերես այն ժամանակ
համարձակիք խօսիլ և զիս խնդրել իրեւ ճերը, քա-
նի որ տակաւին չէք կարծեր որ ունիք այդ իրաւ-
ունքը . . . 10

Պէլա՞ շուարած և անհուն խնդովիթեամբ համակուած՝ յայսի մը կռթնեցաւ : Նա կ'զգար որ նուազելու մօտ էր՝ այս երկնատուր յանկարծահաս երջանկութեան բեռին ներքե նկուն . . . : « Անդունիա, միթէ լաւ լսեցի, ըսելու չափ հազիւ կարազութիւն ունեցաւ Պէլա՞ . . . :

— Այսուհետեւ ըստ առաջին պատճենի մեջ նորատի օրինակ է իր վարագալի վայրը թողարկված է : Եւ թոշնիկի մեջ պէս թեթևացարձ՝ վազեց Պէլափ մօտ, երկնցոց անոր իր ձեռքն, դոր Պէլափ իրենին մէջ սեղմեց արրշիուն :

Եւ մինչ կ'ժպտէր միշտ Անգոռիա, կ'ջանար նաև
Լուսանիի հրավառ աչերէն պահել իր սիրանուշ դէմ-
քը, որու վրայ կ'երեւէր անկեղծ շփոթութիւն մը.
վասն զի երբ օրիորդն ոկսաւ խորհիւ, փաքը ինչ ա-
մօթահար մնաց իր ըրածին վրայ :

Սյնքան այլայլած էին օրիորդն ու պատանին որ
չլեցին լեռնէն վար՝ քովընտի կոպճուտ շաւզէն
իջնող մի քանի անձանց երկաթապատ կօջիկներու
շոնչիւնն Խումբ մ'օրսորդներ էին ասոնք, որ Տաշ-
գայնէ կ'գառնացին, ուր քարայծներ որսալու գա-
ցած էին:

Սոյն որսորդներու պարագլուխն էր բարձրադիտակ մարդ մ'որ հագած էր լեռնային որսորդութեան յատուկ ղիբօլեան հազուստն, այս է՝ կա-

Նաշ եղբներով մոխրագոյն պարեգօտ , մինչև ծունքն հասնող վարտիկն , այնուիս որ անոր վերի կողմն մերկ կ'մնայ՝ որպէս զի յօդակասկներն աղատ շարժին . ուսէն կախուած լայնափող հրացանակն , վարի աղաղաղի կոր վետուրներով և քարայծի եղիքիւրներուն յետսակողմէն կտրուած ձարի փհջով զարդարուն թաղեայ գլխարկն . յաղթանակներ ոսրով կ'ալճնին միայն որսորդներն որ իրենց հարուածներուն ներքեւ ընկճած են այդ կենդանիներն :

Պէլա ճանչեց պարագլուխն՝ որ էր նէ օնտօրփ կոմուր :

Պէլա այնքան երջանիկ էր որ իր սիրտը կ'յորդ էր զգացմանիր . ուստիձ այնովինդագին բարեւ մը կ'ուզդէ կոմսին և իր ձեռքն անոր կ'կարկառէ : Ուակայն նորեկն բռնազրոսիկ կերպով մը կը պատասխանէ այդ ողջունին : Խոկ նորատի օրիորդն՝ որ շատ պարահանդէսներու մէջ կոմսին զբայլման առարկան եղած էր , աւելի ևս կ'գրաւէր անոր ուն : Նոյն պահուն Անդոնիտի շնորհալի դէմքն այլայլութենէ գունաւորուած էր , իր խոշոր աչունքըն տամուկ նըշ շոյլներով կ'փալիքէին խնդութենէ : Կոմսը կ'կարծէր գանուիլ գերբնային գեղեցկութեան մ'առջէ : Երբէք այնքան ցանկալի չէր երեցած իրեն նազելի օրիորդն : Այս երկու նորատի էակներուն երեսին վըրայ դրոշնուած այլայլութենէ զոր անկարող էին քօզդարկել , կոմն իսկոյն կ'գուշակէ այն համաձայնութիւնը որ անոնց մէջ այն ինչ հաստատուած էր և կը զարմանայ որ այս գուշակութիւնն իրեն կոկծալի ցաւ մը կ'պատճառէ : Նախանձը յանկարծ սկսաւ կրծել իր սիրտը :

Կոմսը կ'նկատէ որ անկարելի է խոյս տալ զբօսասէրներուն ընկերութենէ որ զինք նշմարեր էին , և կ'ստիպուի ակամայ զնալ ու բազմիլ գեղջային սեղանին շուրջն որ եղեիններու ներքեւ զրուած էր : Տրտում ու տխուր կ'երեկի , և իր սրտնեղութեան պատճառը կ'վերագրէ քարայծներուն , որ իր նշանէն խոյս տուած և որոց ուղղած գնդակներն ապարդիւն մնացած էին : Անդոնիտ մի քանի օրէն իր հօրը հետ պիտի ուղերէր զէպի Պոհէմիտ : Խոկ Պէլա պիտի երթար իր զօրադնդովը մասնակցիլ հեծելազօրուն ուազմական նոր մարզանաց , որ յատուկ կարեռութիւն մը պիտի ստանային , վասն զի որոշուած էր փորձել հոծ գումարտակներով թշնամւոյն դէմ յարձակելու նոր . զբութիւն մը , զիւտ ԱւստրօՀունգարական այրուծիուն ընդհանուր վերատեսուչ՝ Բէժաքսէվիչ կոմսին : Այսպէս սիրուհի ու սիրահար երկար ամիսներ իրարմէ անտես պիտի մմային : Միայն համաձայնած էին որ Պէլա ձմրան սկիզբն ի պաշտօնէ յայտարարէ իր խորհուրդն և Անդոնիտի ձեռքը խնդրէ : Զէին երեւակայեր երրէք որ իշխանը կըրնար Պէլաի առաջարկը մերժել : Անազորոյն աղէտ մը պիտի հասնէր այդ զգայուն սիրտերուն : Բաժանման երկարատես միջոցին այն գեղեցիկ խորհուրդներն դոր ապագայի համար պիտի գդուեին այս երկու էակներն միակամ արրշութեամբ՝ չոլիտի իրանային :

ՎԵՎԱՅՐ

Դ

Յաջորդ գեկտեմբեր ամսուն մէջն էր, երբ Հոհէն պէրկ իշխանը՝ երբեմն դեսպան Բեղրզպուրկի արքունեաց մօտ, չքեզ պարտհանդէս մը տուաւ ի պատիւ ռուս պայտզատի մ'որ Վիշննա եկած էր: Լումանի վութաց դնալ այդ պարահանդէսն՝ Անդոնիան գանելու յուսով: վասն զի՞ ի լրոյ զիտէր որ օրիորդն իր ուղերութենէ վերադարձ էր մայրաքաղաքը:

Հոհէնպէրկեան պալատը կ'գտնուի ազնուալետական այլ արտուզի թազի մը մէջ, որ Արքին կ'տարածուի մինչև Հերէն-կաս: Եքեղապահծ երեսով մ'ունի սոյն ապարանին ժամանակի աղդեցութենէ սեցած ճակատն, որու վրայ կ'երեխն ադամանդակերպ, հաստոյր քանդակաշնչն վիմեր, փառայեղ կերպ, հաստոյր քանդակաշնչն վիմեր, փառայեղ կերպին յարկ մը, և մտից հոյաշն դրան դրօշմերով վերին յարկ մը, և մտից հոյաշն դրան վրայ պատշտամ մ'որ կեցած է երկու ահեղ կարիքաթակաց (cariatide) վրայ:

Կառքերն՝ որոց անիւներն որոտնդաստ կ'գրդէին սալարկն, սկսան խուժել հանդիսավայրն, դրան սովոր հանելով կոչնականներ՝ որոց շատերն սովորականէն կանուխ թողեր էին իրենց հողեր և քաղաք իջեր:

Պատոյ սանդղին սարութը պատկառելի դիրքով կանդուն կ'սպասէր սկայական բարապան մը, որ յու կանդուն կ'սպասէր սկայական բարապան մը, որ յու մտից ցզլուխ փառաւորապէս քարդարուած էր ժամաւէններով և երկայն գաւազանի մը վրայ յենած՝

որու ոսկեզօծ արուեստակերտ գունդին վրայ դրումուած էին տանտիրոջ զինանշանները: Իր մօա՝ կատարեալ անշարժութեան և միաշար ուղղութեան մէջ կեցած՝ տասն երկու հետիւտ սպասաւորներ իրենց փառազարդ զզեստներն ի տես կ'հանէին, այնպէս որ կաբծես թէ քանձին հուսարներու ջոկատի մասորը նմանութիւնն ունիին:

Հոհէնպէրկ իշխանին պաշտօնը ծանր էր. վասն զի ամեն անգամ որ արշիդքսի կամ տրչիդքսուհւոյ մը գալուստը ծանուցուէր, պարտաւոր էր նա արտորնօք վար իջնել մինչև սանդղին ոտքն և նորին վսեմութեան ուղեկցիլ դէպ ի սրահներուն գուուը, մինչգեռ ընդ առաջ կ'քալէին երկու տաճարապետներ եռածզի: աշտանակներ ի ձեռին:

Այնպէս կ'թուէր որ կայսերական գերդաստանին բոլոր անդամներն նոյն երեկոյ ժամադիր եղեր էին իշխանին սրահներուն մէջ: Եւ իշխանն՝ այս վութեանդն համակրութենէ քաջալերեալ, ընաւ չէր դանդատեր բազմաթիւ ելեէջներէն, որոց պատճառըն էին այս պատուաբեր և ազնիւ ացելութիւնները:

Հոհէնպէրկի պալատը շատ յարմար է մեծ ընդունելութեանց: Սրահներն իրարու կ'յաջորդէին միազիծ, և թանկապին օմոցներով կամ փառաւոր պատկերներով զարդարուն կ'փայլէին չքեղարար: Հոհէն պէրկեանց պատկերասրահն, իրաւամբ անուանի, ցանկագրուած է՝ յօգուտ ճամբորդներու՝ ուղեցոյց դրեանց մէջ. իսկ չարաթն երեք անդամ կ'բացուի այն՝ այցելուներու համար: Պարու սրահն, որ ան-

բաւ տարածութիւն ունի, տարբեր կերպով զարդարուած էր: Որմերն՝ որ բոլորովին սպիտակ էին, ճարերու, ինչպէս նաև արծաթէօծ չորս ահազին աշտանակներու լոյսը կցողացնէին, աշտանակներ՝ որ ահազին սրահին չորս անկիւնները դրուած լինելըվ, կ'հասնէին դրեթէ մինչև Դիէլուօլի ձեռօք նկարուած գմբէթն:

Եւ ոչ մի աթոռ կ'առեսուի այդ սրահին մէջ՝ որ պարորդներու յատուկ կայանն է: Միայն անոնց ներելի է ներս մտնել, և այս ևս երբ երաժշտաց խումբը կ'սկսի նուազել: Պարի դադարման միջոցներուն՝ պարասրահը գոց և պատուհանները գլխովին բաց կ'մնան, այնպէս որ օդը նորոգուի և զովանայ: Այս կարգապահութեան և ընդհանրապէս պարահանդինն վարչութեան հոգը կ'ատանձնէ պարապետըն, որ կ'անօրինէ կաքաւութեալ ամեն:

Պարասրահին մօտ՝ մասնաւոր սրահակ մը վերապահուած է նորատի օրիորդաց: Կոմսուհեաց Արահակ անունը կ'կրէ այն: Այս սրահակն իրին իրենց տունը կ'նկատեն. այս է իրենց թաղաւորութիւնը: Նոյն խոլ մայրերը հազիւ ուրեմն կ'ժարկին անցնիւ այդ ապաստանի սեմէն, որու բաց դռներէն կ'արտահնչն հեշտալուր և դաշտալուն ճայներ, սրտադին և անուշ ծիծաղներ: Այս արտօնութիւնը կ'վայգին և անուշ ծիծաղներ: Այս արտօնութիւնը կ'վայգին և իրամաններն որ հետամուտ են պարու հիմն սիայն պատանիներն որ հետամուտ են պարու հիմն գտնելու և անոր անունը նշանակելու փղոսկրեայ մը գտնելու և անոր անունը նշանակելու փղոսկրեայ մը մէջ: Պարահանդէսէն ետք՝ դարձանը գրահանձնին առանձին սրահի մը մէջ և իրենց պարորդներ առանձին սրահի մը մէջ:

Իռւն ընկերակցութեամբ միայն պիտի ձաշն նորատի կոմսուհիները, միշտ հեռի մայրական աչքէն:

Երբոր Պէլա ներս մտաւ՝ հանդէսն արդէն մեծ ու գերութեան մէջ էր: Նկարագեղ երկուոյթ մը կ'ընծայէր համազգ եստներու այլազանութիւնը, Ընդհանուր սպայից հանդիսական հագուստն այս էր, սպիտակ պարեգօտ ու սկեհուու լայն եզրներով և օծիքով, ուկեցոյն շերաով ծիրանի տարատ, կանաչտոյն փետուրներու հոծ փնջով հովանաւոր զլիսարկ, որ իր վասվան երանդներով աւելի ևս զդալի կ'զործէր միւս համազգ եստներու մթագոյն ուեսքը. սպայակոյտի սպայից կանաչ պարեգօտն, զիշտաներու կապրոյթ թեզանաւոր թիկնոցակն, որոնք հագած էին ոսկեցոյն ցցունքով զարդարուած կաշեայ սաղաւարտ, հուսարներու երկնագոյն մուշտակն՝ սկեթելու և լամբակիներով:

Տեւտոննեան ասպետներն, ծիրանի զգնստով, կ'անցնէին աւագանոյն մէջն իրենց ապդային ջքեղ հագուստով. այս է՝ թաւշեայ կամ գիպակի մուշտակ, սամցրով չըջապատռած և գոհկարազարդ ձարմանդով կապուած. քովընաթի կախուած՝ թերուզակներով ու նոնաքարերով երփնագոյն կորածեթուր: Օտարոտի հագուստներն անդամ նոր փայլ մը կ'տային այս այլազան զգեստներուն ։ Հանդէսին դիցալու, մեծ դուքսը, կալիցեան ու հաններու զումարտակին՝ որու աէքն էր, զնդապետի համազգեսաը հագեր էր: Փոխագարձարար, արշիդոքսերն՝ իրին պատուակալ զնդապետներ, ուստական զումարտակներու համազգ եստն էին հագած:

Աղբառւսի երաժշտական խումբն , որ պարագահին վրայ բացուած թարձը թեմի մը վրայ բազմած էր՝ իր եղանակները կ'հնչեցնէր իր սովորական ճարտարութեամբ և մտամոլար աւիւնով : Պարերն սկսեր էին :

Պէլափ միակ հոդն էր տեսնել Անդ ոնիան . ուստի բնաւ չղիտեց որ սովորականէն աւելի ուշադրութիւն կ'հրաւիրէր իր վրայ , անտարբերներու ակնարկներն անդամ արգահատութեան չափ համակրութեամբ կ'զրաւէր՝ մինչդեռ ինք ամբոխը կ'ձեղքէր կ'անցնէր՝ մի քանի ծանօթներու բարեւներն ընդունելով և այլոց ձեռքը թոփուելով : Նոյնպէս չղիտեց որ Շէօնտօրֆ կոմսն՝ որու առջեը գտնուած էր յանկարծ , որահակէ մ'ուրիշ սրահակ անցնելու միջոցին , աչքը մէկ զի դարձուցած և ինք յետո ընկըրկած էր , այնպէս որ կարծես թէ իրմէ խոյս կ'տար : Չտեսաւ Պէլա այս անցած դարձածներն , և եթէ տեսնէր իսկ բնաւ փոյթը չպիտի ընէր , վասն զի իր հոգին ուրիշ տեղ էր լիովին : Ուրախութեան գերազոյնը կ'զգար քանի կ'խորհէր որ հնգ ամսեայ բաժանումէ ետք պիտի տեսնէր վերստին իր սիրականն , և թերեւս մի քանի շարաթէ ևս անոր հետ անլուծելի կապով պիտի միանար : Հետևապէս իր սիրտն զեզուն էր անդապէլի այլայլութեամբ մ'երբ մտաւ Կոմուհեաց Արահակը :

Անդ էր Անդոնիա , որ պաշտելի գեղութեամբ կը փայէր զերապնիւ սպիտակ արդուղարդովն , բայց այնքան գունատ էր , այնպիսի խոր մելամաղձութիւն մը դրումուած էր իր զիմոց վրայ , որ Պէլափ աչքին

դարիաւ : Անդոնիա տրամադին ժպիտով մը ընդունեց պատահին՝ որ խնդրեց ըլջապարի պտոյտ մ'ընել : Անդոնիա յօժարամիտ հաւանեցաւ չնորհել այդ պտոյտը :

Նոյն պահուն՝ երաժշտական խումբն սկսաւ նուտքել Աւատածուեան Տերձներն զմայլելի ըրջապարին նաև խերդն : Պէլա պարագահն առաջնորդեց Անդոնիան , իր թեռվը ըրջապատեց նորատի օրիորդին ճապուկ մէջ քըն , դող մը բռնեց զինք չփամիք այս կուսական մարմարն որ կ'սեղմէր իր մարմինն , և նետուեցաւ ըրջապարի բոլորապտոյտ չարժման մէջ : Լումանի առաջին կարգի ըրջապարորդ մէր : Աւստրիա քաջ ըրջապարողներու և վայելչակալմ ծիաւորներու երկիրն է : Նորատի զօրապետն թէ մին և թէ միւսն էր : Անդոնիա և ինք ամենէ շնորհագեղ զոյգն էին պարահանդիսին մէջ : Իսկ պարորդներու կոհակն և հանդիսավաններու ակնարկներն կ'յառէին այս զոյգին վրայ և անոնց կ'հետեւ էին սիրայօժար :

Մինչ Պէլա կ'ապարէր՝ կ'արբենար նաև նուրի անուշահնուութենէ որ կ'բուրէր նորատի օրիորդին զեզձանիկ գիտակն՝ պարզ մատանետունկի բռնով միայն զարգարուն : Իր աչքը կիսազին բաց էին շլաշտած լինելով գեղազիծ ուսերուն զալատակրային սպիտակութեան փայլն :

Վերջապէս գտայ ձեզ , սիրելի Անդոնիա , ըստ անոր Պէլա յուղեալ ձայնով : Բայց ուստի այդ արտմութիւնը դոր կարծ եցի նշմարել աչացդ մէջ :

Այն ժամանակ օրիորդն ըստւ անոր այնպիսի ձայնով որ կ'սահէր չունչի մը նման կիսարտոց ըրմերէն՝

որոց շարժումն հաղիւ ուրեմն պիտի կարող լինէր
որոշել հեռաւոր զիտողն «Մաիլ ըրէք ինձ . բայց
որովհետեւ ոչ ոք պարտի մեղ լսել, որովհետեւ չգի-
տեմ թէ այսուհետեւ ոլիտի կարենամ երբէք խօսիլ
այնալիսի ազատութեամբ որպէս այս շրջալարը կ'թուլ-
ատրէ ինձ խօսիլ, մի՛ կանկ առնէք . . . : Վասն զի
պիտի սախալուիմ ձեղ թաղուլ ուրիշներու հետ պա-
րելու համար, և ժամանակ չպիտի ունենամ ըսելու
ձեզ. . . : Եւ թէպէտ շատ դառն ու անազորոյն
պիտի երեխ ձեղ ինչ որ այժմ պիտի լսէք, բայց
անփրդութեցիք, որ ոչ ոք կարող լինի կարդալ զէմ-
քիդ վրայ հոգւոյդ մէջ անցածը . . . : Մեղի կ'նաշին
ու կ'զիտեն . . . :

Աշտալի նախազգածում մը համակեց Պէտաի սիր-
որ: Կարող եղաւ զսպել իր վիշտը, և՝ առ երեսից ո-
տնդրդուելի, շարունակեց շրջալարն կանոնաւոր
շարժմամբ՝ շրջերուն վրայ ցոյց տալով հրամայական
ժպիտ մը:

— Խոսեցէք, ըստ նա, պատրաստ եմ ամեն ինչ
ըսելու:

— Պէլա՛, պարտաւոր պիտի լինիք հրաժարիլ իզմէ-
. . . հայրս կ'ուզէ զիս ամուսնացնել. . . :

Թէ և Պէլա ինքն իր վրայ մեծ իշխանութիւն ու-
նէր, թէ և պատրաստ էր այս հազրոդակցութեան,
բայց սարսուռ մ'զգաց ոտնէն ցգլուխ, և Անդոնիա
զգաց այն թունդն որ շարժեց իր մէջքը սեղմող
թեւը: Զոյգ ընդ զոյգ կ'սահէին իրենց շուրջը պա-
րողներն, ճամբուռն վրայ անոնց քսուելով թեթև
կեռպասներու թռոցիկ չերակրով և լուսաշող դու-

հարներու ցոլացմամբ: Պարորդներու բոլորտիքն լու-
սաղիծ ծիրեր կ'յօրինէին երփնաշող գօափներ և
սպազից ոսկեգոյն ուսնակազները: Պէլա ընդ ազտ
կ'տեսնէր այս ամենը: Հաղիւ կ'լսէր խօսակցութեանց
շլոթ մրմունջն, պարահանդիսի գոռ ու զոչումն և
երաժշտական խմբին թրթուռն որոտումն որ կ'տի-
րապետէր ամեն բանի վրայ . . . :

Անդոնիա շարունակեց: «Հայրս անդդայ մնաց իմ
աղազանաց: Այն անձն որու հետ զիս կարգել կ'փա-
փաքի բարձր դիրք և մեծ հարստութիւն ունի: Ի
շնորհս այս միութեան որու սիրայօժար կ'հաւանի,
կայսրուհին . . . որ չէ կարող զիտնալ, Պէլա, որ
զիրար կ'սիրենք, յայտնեց թէ կ'համի զիս իր մօտ
առնուլ իրրե պատուց տիկին, և այս բանս իմ հօրս
սիրական փափաքներու լրումնէ: Ուստի երբէք չնե-
րեր որ այսպիսի պատիւմը մերժեմ՝ մերժելով միա-
նալ. . .

Այս պահուս՝ նորատի օրիորդը կայ առաւ վարա-
նելով:

— Որո՞ւ հետ, հարցուց Պէլա սուլիչ ձայնով մը,
այնքան իր կոկորդն էր հեղձուկ:

— Շէօնտօրֆ կոմին հետ:

Նորատի սպազին համար նոր վիշտ մ'եղաւ այս
բանս: Իր բարեկանիլ. և ստկայն Վալդպախի տեսա-
րանն՝ երբ յանկարծ վրայ հասաւ նա, պարտէր բա-
նուլ իր միտքը . . . Շէօնտօրֆ: ընաւ երբէք չէր
կարծեր որ նա իր ոսոխը պիտի լինի . . . :

— Պէլա, չորայարեց զեռատի օրիորդը բորբոքե-
լով, զուք էք իմ ձակատազրիս տէրը . . . Զերն է

իմ կեանքս . . . եթէ հրամացէք, պատրաստ եմ հնաշ
զանգելու ձեղ քան թէ հաւանիլ միութեան մ'որ
իդմէ կ'պահանջուի . . . : Խօսեցէք . . . ինչ որոշում
որ ընէք, պիտի կատարեմ:

Երկուքն ի միասին կ'չարունակէին ըթապարն իբրև
երազի մէջ, զրեթէ չզիտէին թէ ուր կ'զանուէին և
ինչ շարժումներ կընէին, շարժումներ՝ որոց թեթե-
ւութիւնն տարօրինակ հակապատկեր մը կ'ընծայէք
իրենց յուսահատութեան հետ: Պարորդներու միւս
զոյգերն հետզհետէ կայ առեր էին և ամենուն ակ-
նարկը կ'հետեւէք երկու նորատի ամողց՝ որոց արիւո-
թիւնն ու չնորհն ընդ հանուր զայլում կ'պատճառէ-
ին: Կարելի էք զիտել մի շատ ակնարկներու մէջ
հետաքրքրութեամբ խառն համակաւթիւն մը:

Ամեն մարդ կ'գուշակէք թէ անսովոր բան մը կը-
անցնէք այս երկու պարակիցներու մէջ, և թէ իրա-
րու փախած խօսքերը՝ թէ և ամենէ սուր ականջին
անլսելի, պարողներու յատուկ թեթե խօսից չին
նմանէր: Հետեւապէս հանդիսականաց և ոչ միոյն
մտքէն անցաւ՝ սովորական արտօնութենէ օդուտ
քաղել և երթալ վրդովել, պարու ըթան մը խընդ-
րելով, այդ մտերմական խօսակցութիւնն որ երկու
նորատի անձեր կ'մենաւորէք այն բազմութեան մէջ:

— Իմ սիրականս, ըստ Լուսանի հաստատ ձայնով
մը, թոյլ տուէք ինձ որ այս անունը տամ ձեղ՝ ու-
րիշին լինելէ առաջ. միմէ կարծէք թէ կարող եմ
վրդովել ձեր կեանքը, յորդորել ձեղ զործել պար-
ատւորութեան դէմ՝ որ է ձեր հօր հնապանդին,
թէ և նա չզիտէ բնաւ թէ ինչ բանով կարելի է ա-

պահովել ձեր երջանկութիւնը: Պարտաւոր էք հա-
մակերազիլ իր կամաց . . . իսկ իմ վրայ մի ցաւիք.
Ես դարձեալ շատ ու շատ երջանիլ պիտի համարիմ
ինքզինքս, քանի որ զիս սիրեցիք . . . :

Ակա յիմարական զաղափար մ'անցաւ երիտասար-
դին զլիսէն:

— Սակայն, այդ կեանքէն՝ որու համար կ'ըսէք թէ
իմ է, և զըր ինձ կ'ընծայէք, կ'փափաքիմ, որ ժամ
մը միայն իմ լինի. . . : Այն օրն որ ձեղ զրկացս
մէջ առնլով կրեցի, անհուն երանութիւն մը վայելե-
ցի . . . : Տուէք ինձ այդ երանութիւնը. . . : Որդ-
եօք պիտի կարենամ վերստին վայելել ձեղ իմ սրբ-
ատի վրայ սեղմելու չնորհը, չէ թէ այս օրուան պէս՝
բազմութեան մէջ, այլ առանձին, միայնակ, ակ-
նարկներէ հեռի . . . : Բայք ինձ, Անդոնիս, միթէ
պիտի վստահիք այն անձին պատւոյն՝ որ ձեղ աւելի
կ'յարգէ քան կ'սիրէ . . . : Միթէ պիտի կատարէք
իր խնդիրը . . . :

Նոյն միջոցին վիներն անսահման քաղցրութեամբ
աղանակ մը կ'մրցնչէին: Անդոնիս, այլայլութենէ նը-
կուն՝ կ'զգար որ պիտի նոււազէր . . . : Անշուշտ վար
պիտի ընկնէք, եթէ Լուսանի զանի չըռնէք ուժզին
կամ զրեթէ չլիլէր . . . :

— Այս, ըստ մարմուն ձայնով մը, նշան մը մի-
տյն ըրէք . . . և պիտի վազեմ զամ . . . :

— Միթէ կ'խօստանաք երդմամբ:

— Կ'երդնում . . . :

Եւ իր գեղանի զլուխն զէպ ետեւ ծռեցաւ՝ աչերը
զայ: Երջալարի յետին չեշտել լսելի կ'ինէին: Պէլա-

կանկ տռաւ: Ճամ էր կանկ առնըու: Եթէ քանի մը
քայլ ևս առնէր, Անդոնիա չնջանլառ պիտի մնար:

Մի քանի վայրկեան անշարժ կեցաւ՝ նորատի ըս-
տոյին թեին յենած՝ մինչև որ ինքզինք գտաւ: Այն
ժամանակ Պէլա ճակատը բարձր և դէմքն անդըրդ-
ուելի կոմունէնեաց Սրահակն առաջնորդ եց Անդոնի-
ան՝ և լոին խոնարհութիւն մըրաւ անոր առջև:
Քանի մը վայրեան ետք՝ Լոմանի պտրահանդէսէն
կհեռանար:

Պէլա, ինչպէս միշտ, այս պտրադաշիս մէջ ևս մե-
ծանձն ու անշահախնդիր երեցած էր՝ յորդորելով
արդէն իրը իր նշանածը նկատած անձն համակեր-
պիլ տռաջտրկուած միութեան: Սակայն այս զահո-
ղոթիւնը չէր կատարած տռանց որտի մորմոքման
և կոկտանաց:

Եթէ Պէլա յորդորէր Անդոնիան՝ որ իրաւամբ ա-
նողոքելի կարծուած հօր մը կամաց զիմադրէ, այդ-
դիմադրութիւնն անտարակոյս յաջող եւք մը չպիտի
ունենար, այլ միայն մեծ աղմուկ պիտի հանէր և
զիէննական սրահներու խօսակցութեանց ճարակ մի-
այն պիտի տար:

Սրդ այդպիսի բան մը նորատի օրիորդին համբա-
ւը պիտի տրտաել, քանի որ Շէօնտօրք կոմին հետ
իր ամուսնութիւնն արդէն ի պաշտօնէ ծանուցուած
էր, և լոմանի լու ևս կ'համարէր մեռնիլ քան թէ
Անդոնիան բանտարկու լնդուներու նշաւակ ընել:

Ահա այս պատճառաւ իսկ մոքէն չանցաւ Շէօն-
տօրք կոմին հետ կոռուի բանուիլ: Բաց տսափ՝ միշտ
անկեղծ լինելով՝ Լոմանի կրնար կարծել թէ Շէօն-

տօրք կոման բոլորովին անդէտ էր իր և Անդոնիայի
մէջ եղած խորհրդաւոր յարարեցութեանց մասին:
Միթէ իմացէր, միթէ տեսել էր իսկ ինչ որ զրեթէ
իր աշաց ներքու տեսի ունեցած էր ի Վալդպախս: Պէ-
լա չէր կարող այդպիսի բանի մը հաւատալ: Ուստի
կմար իրեն համակերպիլ և իր վիշտը տանել լուս-
թեամբ: Եւ այսպէս ըրաւ: Բայց իր սիրականին ա-
մուսնական հանդիսին ներկայ գանուելին իր կարո-
ղոթենէ վեր էր: Օտար երկիր մը գնալու համար
զինուորական պաշտօն մը խնդրեց և ստացաւ, այն-
պէս որ մի քանի ամիս տարակաց պիտի մնար:

Այս պաշտօնը վերջացուց ճիշտ այն միջոցին ե՞ր
Շէօնտօրք կոման ու կոմունին վիէննա կ'մոնէրն
իտալիոյ ուղերորդենէ դառնալով, վերադարձ որ
հաջակուեցաւ վէպիս սկզբն նկարագրուած խընդ-
ոյրով:

→ ԷՅՅ 3 ←

Ե

Վիէննափ բոլոր սրահներու մէջ՝ Ալդէնադէն իշխա-
անուհւոյն սրահն անտարակոյս ամենէ շատ հոչակ
և փայլ ունէր:

Սրդարէ՝ իշխանուհւոյն նշանաւոր խելքն, իշխա-
նին զբաւիչ խօսակցութիւնը, իշխան մ'որ ոչ միայն
իրիկ արժանի քաղաքաղէտ անուանի՝ ունէր նաև

առաջնակարգ արուեստագիտական տաղանդ, մեծ հրապար կը նծածէին Ալլ Ենոդէյնի պալատի ընդու- նելութեանց, որ չինուած էր Հին քաղքին մէջ Մի- նօրիաեանց հրապարակի վրայ:

Այս ընդունելութիւններն որ կանոնաւորապէս կը նորոգ աւէին շատ ամիսներ՝ շաբաթն երկու անգամ բոլորափին մտերմական բնութիւն մ'ունէին: Անդ ժամադիր էին Օրէրայէն կամ Պուրկի թատրոնէն ելնելն եսոք՝ ընկերութեան ամենէ լուրջ և ամենէ գուսասէր անձինք, քաղաքակէտներ՝ որ օրուան ծա- զգօսասէր անձինք, քաղաքակէտներ՝ որ նոր լուրերու կամ նը- տէրութեանց գեսպաններ՝ որ նոր լուրերու կամ նը- շանակելի տալաւորութեանց հետամուտ էին, բարձ- րադիր մարդիկ՝ որ չէին անգուներ դալ և՝ բազմոցի մը ծայրը նստած՝ քծնիլ, իրեւ պարզ մահկանացու- ներ, սիրուն և զուարթ նորատի կնկան մը հետ- թեթև և խնդալի խօսակցութեանց հետ՝ իշխանու- հետյն սրահներուն մէջ ստէպ կենսական շահերու վրայ վիճարանութիւններ կ'ինչին, և ստէպ թաս մը թէյի մէջ կ'որոշուէր անդ հանդիսի մը ծրադիրն ինչ- պէս նաև միջազգ ային գաղնադրի մը Հիմադիքը:

Իշխանուհին որ սուր մտքին չափ ունէր և իմացու- կանութիւն, ստէպ կ'միջամտէր այնքան ներհակ բա- նակցութեանց մէջ: Բայց եթէ քաղաքական խնդիր- ներուն մէջ իր միջամտութիւնն թագուն էր ու խոր- հրապար, ուրիշ գործերու մէջ գերակիւ:

Հանդ էսներու, մանաւանդ ողորմասիրական ձեռ- նարկներու մէջ նա բացարձակ կ'տիրապէտէր: Ոչ որ կարող էր այդ տեսակ զործեր լու ևս կազմաւորել:

և կարելի է ըսել թէ անոնց հոգին ինքն էր: Ողոր- մասիրական հանդէսները շատ յարգ ունին ի Վի- էննա: Այս զբօսասէր և սիրուն քաղաքին մէջ այն- պիսի հանդէսներ գրեթէ օրինական հիմնարկու- թեան չափ կարեւորութիւն ստացած են: Զկայ ձը- մեռնային եղանակ մ'որ ողորմասիրական հանդէս մը գոնէ մի անգամ կազմելու ասիթը չողատահի: Դա- նուր գետը մերթ ընդ մերթ իր փոսէն դուրս ելնե- լու քմհաճոյքն ունի՝ զետափնեայ բնակներուն բա- ւական վնաս պատճառ ելով: Անպակաս են նաև հրդեհներն, թանկաղին միջոց մ'արդ արե, վասն զի գետն իմաստութեան յարատե կամէութիւններ կըր- նայ ունենալ, այնպէս որ բարիք ընելով զուարձա- նալու ո և է պատրուակ չպիտի ընծայէր:

Այս երկու պարագայից մէջ ևս, եթէ միայն ա- ւերուած և այցուած տուններու թիւն բաւական պատկառելի գումարի մը հասնի, իսկոյն մասնաժո- ղով մը կ'կազմուի ողոզելոց կամ հրդեհելոց օգնելու թատերական ներկայացում կամ կենդանի պատ- կերներ ի հանդէս հանելու համար կ'զումարուին: Վիէննայի նշանաւոր սիրիններ այս առթիւ չեն գժկամակիր արուեստագիտի կերպարանն առնուլ, վասն զի ողորմասիրութիւնն կ'արքարացնէ այնպիսի ազատ ընթացք՝ որ ուրիշ պարագայից մէջ աններելի պիտի նկատուէր, և թոյլ կ'այ այս նպ ստակին հա- մար երեխիլ պալատի մը մէջ պատրաստուած թա- տերարեմի մը վրայ, կամ մինչև իսկ սովորական թատրի մը վրայ՝ վճարող հասարակութեան մ'առջեւ: Ոչ ոք այնքան յաջողակ էր որքան Ալղէսդէյն իշխա-

նուհին այս տեսակ թատէրական խաղեր կազմելու
և մանաւանդ անոնց մէջ դեր մը կատարելու հա-
մար:

Իրաւի՝ իշխանուհին ի բնէ ունէր զարմանալի ծիր-
քեր որ ստէպ կ'մոլորին այն անձերու վրայ որոց ըն-
կերային պայմանադրութիւններ թոյլ չեն տար ան-
տի օգուտ քաղելու, և այդ ձիրքն այսպէս կ'կրոսու-
ին ի մեծ վեաս արուեստի և եռանդուն զիտակնե-
րոււ: Իշխանուհուոյն արտասովոր տաղանդն առաջին
անդամ երեան ելած էր կատակերգութեան մ'առո-
թիւ՝ որու մէջփորձեր էր դեր մը խաղալ: Իր յատ-
կանիշն էր զուարթուն աւիւն մ'որով ամենուն սիր-
տը կ'զրաւէք: Աննման էր երբ հարկ լինէր շրջտաղ
(rondeau) մը կամ տողան մ'արտարերել: Կրակ ու
բոց կ'փշէր չըրսդին: Իր օրինակէն մղեալ տումիկ
նորատի կիներ ու պատանիներ՝ որ աջակից էին անոր
սոյն ներկայացմանց մէջ՝ կ'կազմէին միակատար ա-
կումբ զոր թատրոնի մը տնօրէնն ուրախ պիտի լի-
նէր իր ձեռաց ներքե ունենալու:

Գոնսդանդինսկէի երեկոյթին յաջորդող որը՝
բացառիկ կարեորութիւն մը կ'ընծայէր Ալդէնողէյն
իշխանուհուոյն ընդունելութիւնը Հարկ էր մի քանի
օրէն Հոհէնալէրկի պալատին մէջ տրուելիք մեծ հան-
դիսի մը վերջնական պատրաստութիւններն որո-
շել: Այս պալատին լայնատարած պարասրահը թատ-
րոնի վերածելու կ'աշխատէին: Ներկայացումը պիտի
բաղկանար երեք արարով պարկաց հանդէսէ մ'որ
Ալդէնադ էյն իշխանին և Մէլոի գերկոմսին աշխատա՛-
ցութեամբ յօրինուած էք: Այս գործին մակագիրն

էր — Ուինկի վրայ նիպէլունիէն — որ Վակնէրի զոր-
ծէն և արդի տիպարներէ վոխ առնուած զիւցազ-
նական անձերու զուարձալի խառնուրդ մը կ'ներ-
կայէր:

Երաժշտութիւնն Վակնէրի զուարթադին մելեղիւ-
ներէ և ֆրանսական նորելուկ այլ ոչ այնքան հոչա-
կաւոր գուսանական խաղերէ, և կամ ընտիր երա-
ժիւտ՝ Գոնրատ իշխանին ձեւով յօրինուածներէ
քաղուած այլազան եղանակներու բազաղրութիւն-
մ'էր: Պարտ է ըսել, որ իշխանուհին՝ լոհենիքէնի հե-
ղինակին խանդավառ խնկարկուն՝ ակամայ ընդու-
ներ էր այսպիսի տարասեռ տարբներու միաւորու-
թիւնն, յայտարարելով որ յետին ծայր անպատճառ
վարմունք մ'էր այն մեծ վարպետին նկատմամբ:

Իշխանուհին ի հարկէ առաջին զերը պիտի խա-
զար թատերգութեան մէջ և հետզհեաէ պիտի զար
ի տես այլ և այլ անձերու զէմքով և տարբեր հա-
զուստով: Իր մօտ պիտի փայլէին նաև համանման
ազգեցիկ դերերու մէջ չքնազազ եղ կոմսուհին Դրէս-
պնից՝ որ նորին կայսերական և արքայական Վեհա-
փառութեան շատ ծանրաբարոյ, զզօն և մտերիմ
խորհրդականի մը նորափթիթ կինն էր, և փաքրիկ
սիրուն իշխանուհին Ոկուսդա լիէպէնթալ, որ նոր
այրիութեան մը վիշտերը հազուազիւտ արիութեամբ
կ'տանէր: Գոնրատ իշխանին տուած օրինակնե-
րուն համեմատ պատրաստած էյն զարդ արանքն ու
հագուստներն և զոր ամենքը շատ սքանչելի կը
գտնէին:

Թատերտկան խումբը փոքր ինչ կ'ցաւէր որ Դաւ-

նուրի գրեթէ շրջանաւոր ողողումն, որու անհամբեր կ'սպաէին, տեղի ունեցած չէր:

Եւ ոչ իսկ անշան հրդեհ մը պատահած էր՝ իբրև ոլ ստէհ առիթ մը: Կ'մնային միայն քաղքին աղքատներն, ինչպէս նաև զսնաղան մարդասիրական հիմնարկութիւններ, որ անտարակոյո օժանդակութեան արժանի էին: Սակայն նոյն օրերն առաջնոց ի նըսպաստ մեծ վաճառք մը տեղի ունեցած էր՝ պարափականական Ընկերութեան կայանը: Իսկ միւսներուն մէջ չլար հիմնարկութիւն մ'որ ձմրան եղանակին առթիւ՝ ունեցած չինէր իր բարեգործական նուագահանդէսն կամ պարահանդէսը: Հետեապէս ողորմասիրական նոր հանդէս մը կազմելու համար ու է պատրուակի չկար:

Ուստի հարկ սպիտի լինէր համակերպիլ առանձնակի խաղալու փոքրիկ շրջանի մը մէջ՝ ձրիապէս և սակաւաթիւ հանդիսականաց առջեւ: Արդ՝ ամեն ոք զիաէ որ այս տեսակ հասարակութեան մը ծափերն այնքան ախորժելի չեն որքան վճարող հասարակութեան մըծ ափահարութիւնները: Խ վերջէ՝ թատերական խումբը ստիթուեցաւ համակերպիլ այս որոշման:

Նոյնպէս կարեոր էր որոշել նոյն երեկոյ թէ արդեօք պէտք էր ստրկային հանդիսին միացնել և կենդգանի պատկերներու ներկայացումը: Այս պարագայիս մէջ՝ մ'որ կութանած ձեռքը սեղմեց, առանց բառ մ'արտասանելու խոնարհութիւն մըրաւ կոմուհոյն առջեւ, գնաց նստաւ Օկուսդա իշխանուհոյն մօտ և հեռուէն պաղ բարեւով մը պատասխանեց կոմսին զիսինշանին զոր կեղծ մոերմութեամբ մը իրեն կուղջէր:

Բոլոր այս ծանրակիւռ խնդիրները խորհրդակցութեան առարկայ սպիտի լինէին երբ ներկայից միծ մասը մեկնէր: Արդ՝ նոյն երեկոյ իշխանուհոյն սրահներուն մէջ շատ բազմութիւն կար: Երկու նորեկ հիւրեր ամենուն ուշը գրաւեցին: Ասոնք էին Շէօնտօրֆ կոմսն ու կոմուհին: Առաջին անգամն էր որ՝ իր ամուսնութիւնէ ի վեր՝ կոմուհին ընկերութեան մէջ կ'երեէր: Ամենուն զժայլում պատճառեց: Շատ գեղեցկացած գտան զինք, թէև նորատի օրիորդի զաւարթուն կերպարանին տեղ՝ լուրջ, զրեթէ ծանր զէմք մ'առած էր:

Իշխանուհին զգուելի ընդունելու թիւն մըրաւ Շէօնտօրֆ կոմուհոյն, յայտնելով թէ ո՞րքան կը վշտանար որ իր վերադարձի թուականին վրայ անստոցդ լինելուն՝ չէր կրցած իրեն զեր մը վերապահել ներկայացուելիք թատրերգին մէջ: Անմըշիթարելի էր նէ այս ակամայ զանցառութեան համար . . . : Բայց բարերազզօրէն կենդանի պատկերներու խնդիրը կ'մնար, այս մասին հարկ էր նոր որոշում մընել:

Նոյն պահուն ներս մտաւ Պէլա: Երբ Անդոնիա կոմուհին տեսաւ նա՝ գոյնը նետեց, ապա՝ իր այլ ալլութիւնը զապելով՝ իշխանուհոյն մօտեցաւ, անոր կտրկառած ձեռքը սեղմեց, առանց բառ մ'արտասանելու խոնարհութիւն մըրաւ կոմուհոյն առջեւ, գնաց նստաւ Օկուսդա իշխանուհոյն մօտ և հեռուէն պաղ բարեւով մը պատասխանեց կոմսին զիսինշանին զոր կեղծ մոերմութեամբ մը իրեն կուղջէր: Օկուսդա իշխանուհին շատ ախորժ կ'զգար զօրա-

կանին ու աչերուն և սիրուն հասակին համար Շատ
չանցաւ իրարու հետ վառվառն խօսակցութեան մը
քունուեցան: Դիւրին է դիսել, որ Անդո՞նիս, Լոմա-
նի սրահը մտնելն ի վեր, զգուշացաւ իր ակնարկն
ամուսնոյն կողմը դարձնել, և երբ սա նէրա մօտ
գնալով ուզեց մեղմիկ ու համակրական չեցալ հե-
տը խօսակցիլ, հաղիւ պատասխան մընդունեց,
տը խօսակցիլ, հաղիւ պատասխան մընդունեց,
վասն զի Անդոնիս իրը ուշաթափ՝ մտիկ ընել կը-
թուէր մատղիլ ինչ որ իր մօտ կ'խօսէին:

Եւ սակայն իր չփոփութիւնն այնքան մեծ էր որ
դժուարաւ պիտի կարենար ըսել թէ ինչ էր խօ-
սակցութեան նիւթը: Թէս շատ ուշագրաւ, այս նիւ-
թը նորատի կիներն ողերող նիւթերու կարգէն
չեր Խօսակցներն եռանդազին կ'բացատրէին Ոու-
չեր Խօսակցներն առջ դէպերու առթիւ որոց թատրն էր
սիոյ դիրքն այն դէպերու առթիւ որոց թատրն էր
Պալքանեան Յերակզին, և կ'վիճաբանէին թէ արդ-
եօք խաղաղութիւնը պիտի պահուանուի թէ ոչ, հա-
նելուկ՝ որու բանամին, ինչպէս ամեն ոք կ'խօստովա-
նելուկ՝ միայն Վարպէնի Սփինքսի ձեռքն էր:
Աւելի հեռուն՝ աշխատիւ կ'խօսակցէին բարենո-
րոգման մը վրայ զոր կայսրը մտադ իր էր կ'ըսէին
քիչ ատենէն ներմուծել արքունեաց ձևակերպու-
թեանց մէջ: Ամեն ոք զիտէ, որ կան ընդունելու-
թեան օրեր՝ երբ կայսերական սլալատին մուտքն
արգիլուած է ազնուականութեան որոշ աստիճան-
ներէ զուրկ անձի մը: Այսպէս սլալատոնեայ մը, զօրա-
պետ մը չեն կարող այն օրերն արքունիքը հրաւիր-
պետ մը չեն կարող այն օրերն արքունիքը կ'սեռին: Բաց աստի-
ուիլ՝ եթէ շինականի մը ցեղէ կ'սեռին: Բաց աստի-

կարող մնաւ ունենալ այն ընդունելութեան սրա-
հին մէջ ուր իր ամուսինը հրաւիրուած է: Այս տրա-
կոնեան կանոններն ի մօտուստ պիտի փոխուէին
Նորին վէհավառութեան հրամանաւ, և սակայ-
դեռևս կային հին դրութեան կուսակիցներ որ կ'ող-
բային այս ազատական գիծումներու վրայ: Վէհա-
պուրկ-Անհալդ պառաւ իշխանուհին նշանաւոր կը
հանդիսանար այս անհաշտելիներու մէջ և եռան-
դապին կ'լասուէր այս ծանուցուած բարենորողման
դէմ . . . :

Բայց երբ տեսաւ որ շատ ընդ իմախոսներ ունի,
ոտք ելաւ և վեհապանծ քայլով մը դ ուրս գնաց:

Նատ հիւրեր անոր օրինակին հետևելով հրաժա-
րական բարեւ տուին ու մեկնեցան։ Արդէն ուշ էր
ժամանակը։ Անդին բազմաթիւ պատաճիներ որ՝
Յարանցի կոմսին չուրջը բոլորած՝ երկիւղածու-
թեամբ մտիկ կ'ընէին Հունդարացի ձիավարքին
արտայպտած դատաստանն նոր կառարշաւի մը վը-
րայ որ տեղի ունեցած էր նոյն առաւօտ խակ ի Բրա-
տէր։ Արուեստահանդիսի պաւատին գմբեթաւոր
հրապարակին մէջ, սկսած էին մի առ մի մեկնիլ և
որահը կ'մնային միայն մտերիմ բարեկամեր։

Եշխանուհեղին մի նշմարին վրայ տաճարապետ
մ'երեալով՝ ապակեայ ծածկոյթով մեծ տուփ մը
բերաւ, որու խորչերուն մէջ շարուած էին այլ և
այլ երկայնութեամբ և խոշորութեամբ գլանիներ; Ա-
մեն ոք հաւնած տեսակին հատ մ'առաւ, շատ ափ-
կիններ արիաբար հետևեցան արանց օրինակին; Օ-
կուսդա՝ փոքրիկ իշխանուհին ամենէ խոշոր գլանին

առաւ, վառեց դայն և իր սիրուն բերանը բոլորելով՝
օդին մէջ սկսաւ փշել մուխի թանձը ամսկեր: Հիւրե-
քը զլսաւոր սրահին մէջ հաւաքուած նստած էին:

Նայն միջոցին այն բռնապրոսիկ դիրքն՝ որու կ'են-
թարկի անզգայօրէն ընկերային ակումբներու մէջ
գտնուող անձն, տեղի տուած էր կերպ մը բնական
թոյլութեան որ ներելի է լաւ ընկերութեան մը մէջ՝
մտերմական խօսակցութեան ժամանակ: Ամեն մարդ
կ'լարուէր իր թեաթոռին վրայ կամ կ'ջանար աւե-
լի հանգիստ ու դիւր դիրք մը բռնել: Ալդէնսդէյն
իշխանուհին ատեանը բաց հրատարակեց այնալիսի
մթնոլորտի մը մէջ որ քիչ շատ նմանութիւն ունէր
ըմոլելարանի մ'օդին: Բայց երբ խօսք առնու կ'պատ-
րաստուէր Քամինց պառօնը սրահին դրան վրայ ե-
րեցաւ:

Այս բարեմիտ պառօնն խնդավայլ դէմք մ'ունէր,
և այս խնդութեան համար՝ լաւագոյն պատճառներու
նախ՝ գոհունակութիւն մը կ'զգար որ բարի գործի
մը կատարմանը կ'ստացուի, վասն զի փոքրիկ լինայի
պատիւը ամբասիր հաներ էր, երկրորդ՝ նոր լուր մը
կ'բերէր և քաջ զիտէր որ ցնծազին պիտի ընդու-
նուէր:

— Իշխանուհի, ըստ նա ներս մանելով, փառք
տուէր նախախնամութեան: Դանուր գետն՝ որու
անքնական կացութիւնն սկսած էր գայթակղութիւն
պատճառել, իր պաշտօնին անհաւատարիմ չպիտի
գտնուի, այս է առիծ տալ ողբրանսիրական զողո-
գտնուի, որոց կազմակերպութիւնը ձեր
ըիկ հանդէսներու՝ որոց կազմակերպութիւնը ձեր
յազմանակին է . . . : Ողողում մը նոր աւերեց փառ-

րիկ զիւղ մ'որ Տրավ գետին կցուանին վրայ կ'զըտ-
նուի, և որու անունը մոռցաց: Այս աղէտը ծանու-
ցանող հեռազիրն այս իրիկուն իսկ հասաւ կտու-
վարութեան . . . : Մի վլտանաք, տիկիններ, և թող
ձեր կարեկից հոգիները հանդ արտին . . . : Շատ ա-
ղէտաբեր չէ արդէն եղած ֆլամը . . . : Մարդու կո-
րուստ չկայ բնաւ . . . : Մի քանի կովիր և քսանի
չափ անշահ տառներ որ կիսափուլ էին, ահա ասոնք
են միայն ողողման պատճառած զոհերը: Վերջապէս՝
վարդաջրի ողողում մ'է այս . . . որ կարծես թէ պա-
տահած է յատկապէս, որ ձեր արուեստագիտական
տաղանդին արժանի պատ՛ մը տալու առիթ լինի:

— Սիրելի պատօն, անտանելի էր բոլորսին, ըստ
իշխանուհին ծիծաղելով: Բայց վերջապէս իրաւ է
թէ այդ աղէտը, քանի որ պիտի պատահէր, ասկից
աւելի զիտաւոր ժամուն չէր կրնար տեղի ունենալ
. . . : Տիկիններ, շարունակեց նէ զանալով զէպի
հիւրերը, տարակոյս չունիմ որ այս պարագ այէն օ-
զուտ քաղելով՝ թշուառներու տառապանքը պիտի
փոյթ տանիք թեթեցնել . . . (ունկնդ իրները միա-
ձայն հաւանութիւն կ'յատանեն): Հետեւալէս կ'ա-
ռաջարկեմ ձեզ հրաւէր կարդալ հասարակութեան
որ ներկայ գանուին ձեր տալիք ներկայացման՝ ի
նպաստ ողողելոց . . . : Ապկայն հարկ է հոգ տանիլ
զիւղին անունն իմանալու, ըստ իշխանուհին Քամ-
նիցի կողմը զանալով . . . : Հոհէնապէրի պալտան
անքաւական լինելով՝ պէտք է խաղալ Գարլ թառ-
բանի մէջ . . . : Կ'հաւաստեմ ձեզ որ անօրէնն իր
հաւանութիւնը պիտի տայ . . . : Տամսակները պար-

տին լինիւ հատը 20 Փիօրին . . . : Ներկայացումն
երեք շաբաթէն . . . : Եւ գործին աւելի շուք տա-
լու համար հարկ է յաւելու կենդանի պատկերնե-
րու ներկայացումը:

Այս առաջարկներն ընդունուեցան միաժամ չա-
ւանութեամբ։ Բաւական սաստիկ յուղում մը հա-
մակեց հիւրերն և վառվուուն բանակցութիւններ
սկսան ամեն կողմէ, վասն զի երկու բոլորովին տար-
բեր բաններ են՝ սրահի մէջ խաղալն՝ առ հարկի ծա-
փահարելու պատրաստ անձերու առջև, կամ դիմա-
դրաւել վճարող հանդիսականներու դատաստանը,
որք տարբեր տարրներէ բաղկացած կ'լինին և որոց
շատերն այնքան հակամէտ չեն կրնար ինչիլ բարե-
սրտութեան։ Բայց իշխանուհին իր ճոռոմաբանու-
թեան աւելի ոյժ տալով և արդէն գուշակած յա-
ջողութենէ սիրտ առնով, այդ վեհերոտ և վարանոտ
անձերը այնքան քաջալերեց, որ յաղթանակը տա-
քաւ ումանց երկչութեանն և այլոց վարանումը
ցրուելով։

Երուելով։ Իր վատանութեամբը գրաւեց բոլոր ունկնդ իրնեւ իր վատանութեամբը ամենքը խօսք տուին աշխատիլ որպէս բու սիրտն և ամենքը խօսք տուին աշխատիլ որպէս զի կարելի եղածին չափ ներկայացումը փայլուն և պարզիւնաւոր ընեն՝ քանի որ հարկ էր օգնել արգա հատելի ողողելոց։

Արդ՝ կ'մնաք որոշել երրորդ կեսի ամառ գուշակ և
նիւթը Առաջին երկու պատկերներն Պոհեմիոյ և
Կալիցիայի ազգային պատմութենէ քաղուած յարա-
գէպներ էին, իսկ երրորդին համար արքան դատ-
ուեցաւ Հունդարիոյ պատիւ ընել: Ուստի վէճ մը

սկսաւ այս խնդրոյն վրայ և հունգարացի հիւրեր
հրաւիրուեցան անոր մասնակից լինիլ։ Ի վերջէ որոշ-
ուեցաւ ներկայել Վէքսէն կոմսուհուոյն Մարգարիտի
գալուստը յարքունիքս Հունգարիոյ Պէլա Գթագա-
ւորին՝ որու հետ երկրորդ անգամ պիտի կարգուէր։
Այս կոմսուհին ֆրանսացի Ֆիլիպ Օկիւսդ թագաւոռ-
րին քոյր և Անգլիոյ Հէնրի՝ գահաժառանգ իշխանին
այրին էր։ Հունգարիոյ վեհապետն՝ որ երկոտասան-
ներորդ գարուն կ'իշխէր, արևելքան ճոխ սովորուու-
թիւններն ներմուծած էր իր արքունիքը։ Հետեազ
պէս առիթ ունէր պերճ գեղապանծ զարդուց ցող-
ցեր ընել։ Մէկ կողմէ Մարգարիտ պատոյ նաժիշա-
ներով և ֆրանսացի ասպետներով էր շրջապատ-
ուած, միւս կողմէ Պէլա՝ չքեղափայլ կերպասներ
հագած դրանիկներով։

— Սիրելիս, ըստ յանկարծ իշխանուհին առ Անդոնիա ուղղելով խօսքը՝ աւասիկ դեր մ'որ ձեզի շատ ու շատ կ'յարմարի; Կարող էք ինիւ գեղապահն Մարդարիս մը . . . :

— Զգիտեմ թէ պարտիմ լինիլ, պատասխանեց նորատի կինն, որ այս անակնկալ յարձակման վրաց զարմանահար և չփոխած կ'մնար:

— Σήμερον ήταν η πρώτη μέρα της έποικης ζωής μου στην Αθήνα. Το πρωί της άρχισα να περπατώ στην πόλη με την απόγνωση της πρώτης μέρα στην οποία ήταν η πρώτη φορά που έβαλα μάτια στην Ελλάδα. Το μεσημέρι της ίδιας ημέρας ήταν η πρώτη μέρα της παραγγελίας μου στην Αθήνα. Η πρώτη μέρα της παραγγελίας μου στην Αθήνα.

սինը զ տունալով, որ զ ժկամակութեամբ լոեր էր իշխանուհոյն յարուցած խնդիրը, պարտաւոր էր իհարութին զ ործ ածել ձեր ամուսնական իշխանութիւնը :

— Այդ իշխանութեան պէտք չկայ, պատասխանեց կոմու ժակ ուելով: Անդոնիա շատ երջանիկ պիտի լինի եթէ ձեզի հաճելի զ ործ մ'ընէ:

— Աքսնչելի : . . . ահա այսպէս խնդիրը կ'լուծուի : . . . ահա ունինք պատրաստ հունգարիոյ աննման թագուհի մը : . . . : Բայց ամուսինն, ուր զ տնել պէտք է Պէլա թագաւոր մը, յարեց իշխանուհին՝ աչքը իր չորսղին ածելով:

— Ի՞նչ, Պէլա մը կ'փնտռէք, զոչեց անխոհեմարար Օկուսգա փոքրիկ իշխանուհին՝ գառնալով դէպի Լումանի՝ որ դեռ իր մօտ նստած էր, բայց չէք տեսներ որ իմ քովու ունիմ անձ մ'որ կտրող է լաւ կատարել իր դերը : . . .

Խօսակցութիւնները յանկարծ դադար առին և ամէնուն դէմքին վրայ կ'երեւէր մտահոգութիւն մը: Քամնից որ սրահին մէկ անկիւնը կանգուն կեցած էր՝ նշանական մնջկատակութեամբ. մը յայտնեց փոքրիկ իշխանուհոյն թէ քանի յարմար և ընտիր էր իր ըրած առաջարկը:

— Ինչու չէ, ըստ բարձրաձայն և խիստ հանդարտ կերպով նէսնտօրի կոմու: Անտարակոյս Լումանի հունգարական թագաւորի մը դերը կատարելու շատ յարմար է : . . .

— Եւ արդարեւ ինչու չէ, ըստ ըստ կարգի Ալդէնսդիյն իշխանուհին: Հաւագոյն անձ մը չ'ը կա-

րելի զ տնել: Յուսամ որ այս մասին բնաւ առարկու թիւն մը չունիք ընելու, յարեց նէ նորատի սպային դառնալով:

— Բնաւ, պատասխանեց նորատի սպայն վեր կանգնելով և իր զլուխը ծռելով: Իշխանուհիս, պատրաստ եմ ձեր հրահանին, եթէ իմ գործակցութիւնս կարեսոր կ'զատէք:

Զօրականին ձայնին մէջ անհշարելի դող մը հազիւ ուրեմն երեան կ'հանէր զինքն համակող այլալութիւնն որ արդիւնք էր այս մտածման թէ կենդանի պատկերներու ներկայացման միջոցին առիթ պիտի ունենար ստէպ ծառենալ Անդոնիայի և անոր հետ խօսակցիլ:

— Շատ լաւ, վրայ բերաւ իշխանուհին: Աւասիկ երկու զիմաւոր անձերը գտնուեցան: Թող իմ գործը լինի վաղը միւսները գտնել: Մաքարտ պիտի զ ծաղրէ հաղուստներն և վաղը չէ միւս օր պիտի սկսինք կրկնութիւնները:

— Իմ վրափաքս է միայն, իշխանուհիս, դիտեց Շէօնտօրֆ — եթէ խնդիրս ձեզի ծանր չթուիր — որ կրկնութիւնները շատ երկար չտեսեն և չստիպուինք անպայման կերպով յետաձգել մեր ուղևորութիւնն դէպ ի Օրթ: Ներկայութիւնս անհրաժեշտ է այդ գաստակերտիս մէջ, ուր չեմ գացած վեց ամսէ ի վեր, և բաց աստիք՝ կ'փափաքիմ այն այցելութեամբ մէծարել կինս:

— Սիրելի կոմս, կատարելապէս դոհ պիտի ընենք ձեզ այս մասին: Երկու երեք փորձեր բաւական պիտի մնին: Աղէկ միտքս ընկաւ, յարեց իշխանուհին

Անդ ոնիայի կողմը դառնալով. Սիրելիս, կ'ըսեն թէ
տարօրինակ բերուզակ մ'ունիք, որու նկատմամբ
այլ և այլ չարանենգ ձայներ կ'չըջին Քանի որ
այդ շափակ այլանդակ բաներ կ'պատմեն այդ գոհարին
պրայ չեմ կարծեր որ զայն կրելու արիութիւնն ու-
նենաք:

— Ինչու չկրեմ, ըստ Անդ ոնիա ծիծաղելով:
Քարլ-թատրոնի մէջ ներկայացումը բարեպատեհ
առիթ մը պիտի ընծայէ ինձ զայն լրելու . . . :

— Ապրիք, սիրելիս: Ահա ցոյց կ'տաք թէ Գալա-
պրայի ուղևորութենէ ձեր բերած արիութեան համ-
բաւն անհիմն չէ . . . : Եթէ ծանուցուի որ առլէզ
բաւն անհիմն չէ . . . : Եթէ ծանուցուի որ առլէզ
բերուզակով զարդարուած պիտի ենէք տեսարան,
բերուզակով զարդարուած պիտի ենէք տասոյթ-
կուրող պիտի ինչինք տաս հազար ֆիօրինի հասոյթ-
մը գոյացնել . . . : Այս, բայց յիմարութիւնը մէկ-
մի գուցէ ձեր անիծեալ քարն իր ունեցած չա-
բագոյժ համբաւն արդարացնէ և . . . :

— Այս մասին անհոգ եղիք . . . ստոյդ եմ որ
այդ պիտի բան մը չափանի ընէ . . . : Մնաք բարեաւ,
վաղը կ'տեսնուի ինք:

Եւ Անդ ոնիա իր ամուսնոյն թեը մտնելով՝ ծանրա-
քայլ զիմեց զէպի դուռը, մինչ Լուսանիի հրավառ
ակնարկն անոր կ'հետեւէր և մանրակրկիտ կ'քննէր
անոր մերկ ու բոլորադեղ ուսերուն զուտ ու նուրբ
գծերն, դեղձանիկ վարսից ծանր թագն որ կ'կցուէր
գծերն, դեղձանիկ վարսից ծանր թագն որ կ'կցուէր
վայելչապէս զիմուն հետ, ինչպէս նաև զիւրաչարժ-
հասակն երկարատուտ սպիտակ սնդուսէ պարեզ ո-
տէն վերասահ, որ կ'ծփար վէտ ի վէտ իր ետեսէն
թանձածալ:

Զ

Վիէննայէն երեսունը հինգ հազարամեղը հեռի և
Դանուրէն մինչև Նէվիէտէլ լիճը տարածւող երկիր
մը կայ: Սոյն երկիրն՝ որ կ'ըրջապատէ Լէյթայի մօ-
տակայ փոքրիկ Պրուք քաղաքն, տեղ տեղ լեռնուտ
է և տեղ տեղ ունի տափաստաններ՝ որ պահակ
զօրաց համար՝ զեղեցիկ եղանակին, իրբե ուազմային
մարզանաց վայրեր կ'գործածուին: Այլ և այլ գու-
մարտակներ կ'երթան յաջորդաբար կ'րանակին մի
քանի շաբաթ այդ հողերուն վրայ: Երբ եմն բազմա-
թիւ զորաբաժիններ կ'համախմբին և այս համախմբ-
մութիւնն առիթ կ'ընծայէ ուազմական կարեօր վայ-
ժութեանց որոց նոյն ինք Կայսրն անձամբ հանդի-
սատես կ'լինի: Այս նպատակաւ Կայսրը կ'ուղեռի
Պրուք քաղաքը ուր կ'բնակի իր զինւորական տան
հետ և բաւական երկար ժամանակ կ'մնայ: Ամեն
մարդ զիտի որ բանակը վեհապետին մտահոգու-
թեան մէջ առաջին տեղը կ'բնակ և կ'տէսնէ որ
Կայսրը շորունակ իր պետութեան մէկ ծայրէն միւս
ծայրը կ'փոխադրուի՝ որպէս զի իր բանակին ամեն
կարգի վաշտերն աչքէ անցնէ:

Պէլա իր ստանձնած պաշտօնին վերաբերող տե-
ղեկագիրն ընդհանուր սպայակոյտի պիտին տալէն
ետեւ՝ բանակը գարձեր էր իր զօրագնդին միանալու
համար: Նախորդ մի քանի օրուան մէջ ողորմասիրա-

կանդիսին՝ յետին պատրաստութիւններն և
կենդանի պատկերներուն ներկայացման կրկնու-
թիւններն աւարտած էին: «Կարողոս Ե.ի մուտքն յԱն-
վերս» պատկերին հմայիչ նկարիչն զոր մահն այնքան
ըստ կորզեց, անձամբ կ'նախագահէր դերասաննե-
րու դումարման: Անհատնում զովեստներ կ'չուալին
իր նկարած հագուստներուն համար, որոց պատ-
իր նկարած կ'աշխատէին անդուլ: Պարկաց հան-
րաստութեան կ'աշխատէին անդուլ: Պարկաց հան-
դէս ևս շատ բարեկէու էր: Տարակոյս չկտր որ մեծ
յաջողութեամբ պիտի պսակու էր այս ներկայացումը:
Հետեապէս Լոմանի ստէպ առիթ դտած էր Ան-
գոնիացի մօտենալու, զանի մօտէն տեսնելու և մին-
չեւ անգամ հետը խօսելու: Այսպէս վարուելու ա-
շխատաւութիւն ունէր մանաւանդ այս պատճառաւ որ
վատութիւն կոմիտի հալարաւութենէ կոմ նախանձոտ
Շէօնտօրք կոմսը՝ հալարաւութենէ կոմ նախանձոտ
հակողի մը տեղ անցնելու երլիւղին այնպէս կեղ-
ծած էր իրը թէ իր կնոջ ընկերանալու սէտք չէր
դդար երբ նէ կրկնութեանց համար թատրոն կ'եր-
թար: Աղջ էսոզէյնի պարատին մէջ վերջին դումա-
թար: Աղջ էսոզէյնի պարատին անմիջապէս եաք՝ կոմսն Ան-
րումը տեղի ունենալէն անմիջապէս եաք՝ կոմսն Ան-
րումը տեղի հետէնէր դէպ ի Օրթի զգետին, որ
զոնիայի հետ կ'մեկնէր դէպ ի Օրթի զգետին, որ
Դանուբի ձախ կողմը չինուած էր՝ Հէնպուրէին քիչ
մը հետին:

Պէտք իր զալուստէն մի քանի օր եաք՝ ուտափւ ու-
նեցած էր ճաշելու կայսերական օթեանը:

Երբ կայսրը բանակատեղին կ'զտնուի՝ սովոր է
իրեն սեղանակից ընել դաս մը սպաններ:

Ճաշն աւարտելին եաք՝ բոլոր կոչուականները կ'գի-
մեն աւաղուտ մէծ քակ մը որ կայսերական բնակա-

բանի վերածուած անշուք տան կեղրոնը կ'գտնուի:
Գլանիկները կ'վառուին և հիւրերը միաշար կենալով
կ'սպասեն որպէս զի կայսրը գայ իրեն յատուկ
շնորհալի պարզութեամբը որով վեհապետներու մէջ
ամենէ համակրելին եղած է, և յաջորդաբար խօսի
մէն մի սպացի հետ: Այս շրջանն ընելէ ետև՝ կայսրը
բոլոր ներկայից հաւաքական բարե մը կ'տայ և կը
քաշուի: Յետոյ ամենքն այս օրինակին կ'հետևին:

Կայսրը յատկապէս սիրալիք իւրպով խօստ էր
Լոմանիի հետ՝ իր գոհունակութիւնը յայտնելով
ստանձնած սլաշտոնին յաջողութեան մասին, որ ի-
րեն ծանօթ էր: Բայց Լոմանի՝ իր մոմտուքով հա-
մակուած՝ զրեթէ անտարբերութեամբ ընդունեց
կայսերական գոհունակութիւնն՝ որ՝
ուրիշ պարագայից մէջ՝ զինք ուրախութեամբ և զո-
ոզութեամբ պիտի լուրի: Ուստի երբ իր զինակից-
ներու հետ բանակավայրը գնաց տրամադիք չէր
երեներ անոնց պէս ընդ փոյթ գնալ և վայելել հան-
գիստ մ'որու արժանի էին՝ օրուան յոզնութեանց
պատճառաւ և որով միւս օրուան մարզանաց պիտի
պատրաստուէին:

Երբ Լոմանի իր զրանը մտաւ՝ սպասեց որ ըստ-
թիւնը տիրէ բանակովայրը: Ժամը տասին մօտ՝ ամեն
ինչ հանդարտ և ի քուն երեցաւ իրեն: Զգուշու-
թեամբ դուրս ելաւ և հասաւ կառավայրն՝ ուր
պատրաստուած էին ծիանն: Անդ՝ առնելով թամբ
մը զրաւ իր Սղէլլօ մտերմին կանակն, և նժոյգն
ճանչելով իր տէրը վրնջեց խնդութենէ:

Այս փառաւոր կենդանին կ'իրիցափ ասպասանէն

Ելած էր, ուր գերընտիր նժոյդներու ցեղը կ'բռւծէ։
ին։ Սղէլը իր ցեղին բոլոր յատկութիւններն ունէր
յետին աստիճան, արագութիւն ու կորով։ Ստէպ
ցոյց տուած էր, և մասնաւորապէս Պոսնիոյ մէջ՝
ինչպէս արդէն տեսանք, իր տոկնութեան վորձերը։
Իր էր մորթին դոյնն արծաթափայլ և իր աղին եր-
կայն ու մետաքսանման մազերով խիտ՝ գրեթէ գե-
տինը կ'քսուէր։ Մինչդեռ Լոմանի թամրին փոկերը
խնամօք կ'պնդէր ուշիմ կենդանին իր պարանոցը
կ'կքէր և իր բարակ զլուեմը մեղմիկ կ'քսէր իր տիրոջն
ուսին։ Մի և նոյն հոգածութեամբ Պէլա կ'անցնէ և
կ'յարդարէ սանձն։

Ապա ձին ախոռէն դուրս հանելով կ'հեծնէ և
ծանրաքայլ կ'հեռանայ առանց աղմուկ հանելու։

Առլի էր լուսնակն և իր արծաթաշող նշոյլով
կ'ողողէր բոլոր դաշտավայրը։ Պէլա կ'անցնի Նէթա-
յէն և երկաթուղիէն, արևմտեան կողմէ քաղքին
շրջանը կ'ընէ, որպէս զի մարդու չհանդիսի մէջ տե-
ղէն կտրելով, ապա արտորէից կողմը կ'դառնայ և
կ'հասնի Ֆիշամէնտի ճամբան որ կ'տանի դէպ ի հիւ-
սիսային արևմուտ։ Ահա այն ժամանակ ձիուն սան-
ձը թողլով ար ճակկեմեկնի սրարշաւ։

Գեղափայլ էր գիշերը, թէև օդը փոթորիկ կ'ըս-
պառնար։ Շունչ մ'անգամ չլար միթնոլորտին մէջ։
Հառերու սաղարթներըն որ շուրջ կ'պատէին ճամ-
բան կախուած էին, մինչդեռ ձիուն սմբակներն շո-
րաբեկ հողը տրոփելով միօրինակ կ'վրդովիին միայն
գիշերային խոր լուսութիւնը։ Աւաթոյր մանր ամպեր՝
արծաթածիր նշոյլով փալփլուն՝ ծանր ծանր կ'շար-

ժէին երկնից երեսը։ Երբ այս սե ամպերէն մին լուս-
նակին առջևէն անցնէր, կարծես թէ աստղին դեղ-
նագոյն սկաւառակն նսեմ քողով մը կ'ծածկուէր։
Բոլոր անդաստաններն ողողով լուսավառ պայծա-
ռութեան կ'յաջորդէր, մի քանի վայրիկան, կապոյտ
գոյն մը և զիւղերն որ մթին դաշտավայրին վրայ
կ'նկարուէին սպիտակաթոյր՝ յանկարծ խաւարին
մէջ կ'ընկլուէին։

Երբ Լոմանի կէօդէլսպրունի բարձունքը կ'հասնի՝
աջ կողմը կ'զարնէ և նոյն արագութեամբ կ'անցնի
անձայն զիւղէն, մինչդեռ ճամբուն վրայ ձիուն տրո-
փիւններէն արթնցով շան մը հաջումները կ'լսէ։
Աւասիկ վերստին կ'մտնէ բաց դաշտի մը մէջ։ Իր
առջևը կ'կանգնի Շուլդէն Պերկն, երկարածև լեռ
մ'որ հարիւր կանգուն բարձրութեամբը կ'նայի
հարթ դաշտին վրայ։ Թէև արահետը թողլով կ'ար-
շաւէ անկանոն շաւիղներու մէջ, սակայն ուազմական
վարժութեանց չնորհիւ քաջածանօթ եղածէ իրեն
այդ հողն և մթութեան չնսյելով դիւրաւ կ'շարու-
նալէ իր ճամբան։ Ապա կ'բռնէ շաւիղ մ'որ այգես-
տաններու մէջէն կ'սողոսկի լեռին կողերուն վրայ և
ծանրաքայլ մազելով կատարը կ'հասնի։ Անդ կանգ
կ'առնու և ուշաղիր կ'նայի հիւսիսային կողմը։

Իր ստից ներքեւ կ'տարածուի ընդարձակ անտառ
մ'որ կը ծածկէ հողին ելեկջներն և զրեթէ մինչեւ
դանուր զետը կ'իջնէ զոր չէ կարող տեսնել դե-
տավին բարձրութեան պատճառաւ։

Բայց հեռուն՝ իր աջ կողմը Հէնպուրիի ողղու-
թեամբ՝ լուսնակն նշոյլներուն ներքեւ կ'տեսնէ մէջ

գետին մանուածադապատ թերուն շողջողումն, դեռ՝
որու ընթացքն բաժնուած է բազմաթիւ կղղեակնե-
րով։ Աւելի հեռուն՝ ձախ ափանց վրայ իր աչքը ընդ
ալօտ կ'նշմարէ խոշոր մութ կոյտեր որ կարծես թէ
գիշերայն կ'ծաւալին հորիզոնին սահմանները։ Ասոնք
են այն պուրակներն որ Օրթ զ զեակը կ'շրջապատեն,
ուր նոյն պահուն կ'բնակին Շէօնտօրփ կոմսն ու
կոմուլին։

Քառորդ ժամու չափ սպասելն ետե, Լոմանի
որու ակնարկն անընդ հատ ուշադրութեամբ կ'հե-
տալոտէր մթապատ առարկաները, կ'ընդնշմարէ լցո
մ'որ մի քանի բողէ փայլելն ետե կ'մարի։ Մի և
նոյն լոյսն երկու անգամ ես կ'երեի և հաւասար
միջոցներու մէջ կ'անհետի։

Անհուն ուրախութիւն մը կ'համակէ նորատի սպա-
յին սիրտը։ Նշան մ'էր այդ լցոն որով Անդոնիա կը
յատնէր թէ արդեկը մը չունէր նոյն իրիկունն իսկ
կատարելու Հոհէնակէրկի պալատի պարահանդիսի
մէջ տուած խոստումը։ Լոմանի կարող է գնալ և
անոր գործազրութիւնը պահանջել։ Ժամադրու-
թեան օրն ու ժամը, լուսատու նշաններն, ամեն ինչ
կարգադրուած էր իրենց մէջ կենդանի պատկերնե-
րուն վերջին կրկնութեան ժամանակ, որու մէջ մի-
ասին սիրտի երեխն։

Պէլա նորէն ճամբայ կ'ելնէ։ Անտառներու մէջն
կ'իջնէ արադասահ շաւիլ մը բռնելով և կ'դիմէ
դէմի Քրօադիշ-Հաստաւ, որ Դանուրի եզրը կ'զըտ-
նուի։ Անդ կայ լաստափայտ մ'որու մ/ջոյտ կ'յու-
սայ գետմն անցնիլ։

Երրոր առաջին տուներուն մօտ կ'հասնի՝ ականջին
կ'զարնեն չութակի ձայներ և բարձր աղաղակներ։
Զգուշութեամբ կը յաստջանաց դէմի ի վայր մ'որու
շուրջը դանուած ցած տուներուն ճակատին առջև
կ'տեսնէ բազմաթիւ ջահներ որ կարմրորակ նշոյներ
կ'արձակեն։ Այս լուսավառ ըշանակէն դուրս կայ
կ'առնու և իր առջև պարզուած տեսարանին կ'նայի։

Պրուքի մօտակայ դիսզի մը մէջ հարսանեաց հան-
դէս մը կատարուած էր։ Հարսնցուն՝ որ Մորավիոյ
սահմանագծին վրայ շինուած Ֆէլտսպերկ քաղքէն
էր, իր ծնողաց և բարեկամաց ընկերակցութեամբ
եկած է, և ասոնք առատ հացկերոյթէ մ'ետք ինչ-
պէս կոշնականներուն ոգեսրութենէ կ'իմացուէր, կը
պատրաստուին իրենց ընակավայրը գտոնալ կառ-
քերով որ կ'սպասէին գետին միւս ափին վրայ։
Հարսին ծնողքն կ'ուղեկցին հիւրերուն մինչեւ Դա-
նուր՝ զնչու երածիշտներու խմբով մը՝ որ իրենց
նուագարանները կատաղօրէն կ'քերեն, և բաժանման
հրաժեշտին աղմկակի ժամը հասած է։

Ոչլա կ'դիմէ հեռուէն այս հարսներներն՝ որ մխոտ
ջահներու լցոյին մէջ կ'արժին, մինչդեռ իրենց եր-
կարածիդ ստուերները պատերուն վրայ կ'երերան։
Վաեանէ այս զիւղականներն նկարադեղ հագուստ-
ներով։ պատանիները հագած են անթառամ ծաղ-
կան գոյնով չուխայէ վարտիք, Լէշնսդէյնեանց գոյ-
նը, որոց աւատներն են, հունգարական կօչիկներ
սրտածե կարուած, շատ կարճ վտաւակ մ'որ մինչեւ
մէջը կ'իջնէ և ցոյց կ'առյ ծաղկանկար մետաքսի
կ'երպասէ բաժկոնակ մը։ դիսի վրայ ունին ուե թա-

զիքէ վերնածիր փոքրիկ գլխարկ մը՝ մետաղէ և ա-
պակեայ ուլունքով ծանրարեռն-աղջկունք բացե-
րանդ շատ կոճկէններ կարձ և շոհած իրարու փրայ
էին տեղաւորած, իրենց սրունքն ձիաւորի կօշիկնե-
րու մէջ սեղմուած էին, որ կրուկէն վեր փափիկորէն
ծալլուած և մինչեւ ծունկն ելած էին, վզնոցը
կուրծքի վրայ խաչածե, մաղերն հիւսուած և քուն-
քի վրայ կոնածե ոլորուած և մետաքսէ թաշկինակ
մը պէտապէս կատուած դլխուն յետսակողմն: Անըս-
պառելի ծիծաղներ, մէջն ընդ մէջ հարցումներ լոե-
լի կ'ինին: Արդ էն այս խմբին մի մասն գետին ա-
փունքը կ'հասնի: Ամենէ աւելի շտապողները կ'զիդ-
ուին խմբովին լաստին վրայ, մինչդեռ լաստորդն ի-
զուր կ'ուատուիրէ որ աւելի ծանր շարժին:

Պէլա՝ որու միակ փափաքն էր նոյն պահուն ան-
տես մնալ, լաստին միջոցաւ միւս եզրն անցնելու դի-
տաւորութենէ ետ կը կենայ: Իրաւի՛ խոհեմութիւնը
պարտ կ'գնէր իր վրայ այսպէս փարուելու: Լաստա-
վարը կրնար վտանգ աւոր վկայ մը մինիլ: Ուստի
վարը կրնար վտանգ աւոր վկայ մը մինիլ: Արդ էն շատ անգամ
կ'որոշէ ի լոյզ գետէն անցնիլ: Արդ էն շատ անգամ
գումարտակին գլուխը կեցած՝ շատ գետերէ ան-
իր գումարտակին գլուխը կեցած՝ շատ գետերէ ան-
իր էր, վասն զի Աւստրօ-Հուգ արական սքանչելի
հեծելալորդին մէջ այս վարժութիւնը ստէսլ կ'կրկ-
նուի: Միայնակ՝ պայծառ դիշերով՝ և իր ընտիր ձին
Սղէլլն հեծած՝ այս անցքն իրեն համար լոկ խաղա-
մի մը պիտի լինէր:

Պէլա ետ կ'դառնայ և զիւղէն մի քանի կանգուն
հեռի՝ գետն ի վար կ'հասնի ցած սարաւանդ մը և
այն իրեն համար յարմարագոյն մեկնակտը կ'երեւի:

Այս աւազուտ ծայրը յանդող տեսակ մը հեղեղա-
տի մէջ չմտած, զօրականն գետափին բարձունքէն,
որ նոյն վայրը ահազին դարեւանդ մը կ'յօրինէ, ու-
շադրութեամբ կ'զիտէ գետին ընթացքն զոր լուս-
նակը լիուի կ'լուսաւորէ և իր բռնելիք շաւիզը կ'ո-
րոշէ:

Երկու կղզեակներն Դանուրը կ'բաժնեն՝ այն կողմն
որ իր աչքին առջև կ'պարզուի, երեք անհաւասար
թեերու:

Առաջինն՝ որ մօտագոյն է եղերքին, վաթսուն
կանգուն լայն է: Ասկա կ'երելի եռանկիւնածե կղզի
մը՝ մասամբ անտառուտ՝ որ աւելի քան հազար հինգ
հարիւր կանգուն երկայնութիւն ունի և որու լայ-
նութիւնն՝ այն կիտին վրայ ուսկից Պէլա պիտի անց-
նի, չուրջ երկու հարիւր կանգուն է: Գետին մեծ-
թեն անոր կցուած է, այն վայրն որ ամենէ նեղն է,
դարձեալ երկու հարիւր յիսուն կանգունէն աւելի
լայնութիւն ունի: Աւելի վար՝ գետը արագօրին կը
լայննայ և մինչեւ եօթը հարիւր կանգունի կ'հասնի:
Երկրորդ կղզին՝ ահազին աւազակոյտ մը, որու վրայ
հազիւ մի քանի ծառեր կ'երելին, ցամաքէն զատ-
ուած է ուրիշ թեռով մ'որ ութսուն կանգուն լայն
է: Ի վեր անզը կ'երեւի ձախ եզրն՝ զրեթէ գետին
հարթ հաւասար՝ և հետեւապէս զիւրամատչելի: Ան-
տի՝ շատ զիւրին է, անտառուտ շաւիզ մը բռնե-
լով՝ հասնիլ Օրթի ճամբան՝ որ քիչ մը հեռուն կը
դտնուի:

Պէլա պաշ արիւնով նկատեց իր ընելիք ուղեո-
րութեան բոլոր յաջողութեան պայմանները և տա-

րակոյս չունէր որ պիտի յաջողէր։ Զրերը ցած են, իսկ երկու կզգիներն՝ որ իրենց աւազուտ դրից պատճառաւ դիւրահպելի են, ձիուն համար հանդստեան վայր մը պիտի լինին։ Ի վերջէ՝ վիճակը նետուած էր։ Եթէ այս ձեռնարկն տասն անդամ աւելի վտանդաւոր լինէր և վտանդը տասն անդամ աւելի մեծ, դարձեալ Պէլա չպիտի ընկրկէր . . . : Դար ի վար կ'իջնէ գետափէն և իր ծիուն կողերը սեղմելով սրունքով կ'մտնէ ջուրը։

Նախ՝ աղնիւ կենդանին կ'վարանի։ ապա՝ երբ իր տէրը ձայնովն ու ձեռօքը կ'ողուէ զայն մեղմիկ, միրա կ'առնու և ընդ առաջ կ'քալէ արիարար։ Տասնեակ քայլ առնէ ետք՝ ոտքը ցամաքէն կ'կտրի, իր վիզը հորիզոնական ձեռվ ու իր ստորին կզակն շիտակ կ'երկարէ ջրին երեսն և կ'սկսի լողալ։ Պէլա՝ կարելի եղածին չափ, կենդանին ուղիղ գծի վրայ բռնելու և հոսանքն հեռու պահելու համար՝ իր ձեռքը դէպ ի ձախ կողմը կ'տանի և կամացուկ մը կ'ծանրանայ անոր քամակին վրայ։ Նոյնպէս հոգ կը տանի չքործածել սանձն որպէս զի ձիուն քիթը վար հակելու չստիպուի և ոնդունքը ջրով չլեցուին։ Պահ մը ետք՝ Պէլա կ'հասնի այն կզին որու ափունքը տափարակ են, հեշտիւ ցամաքը կ'ելնէ և անոր մէջէն անցնելով մեծ թեին առջևը կ'գտնուի։

Կղզւոյն այս կողմն աւելի արագասահ է հոսանքը։ Պէլա գուշակելով որ թերես իր ծին հեռու կ'քշուի և անկիւնագծի ձեռով կ'կատարէ իր անցումն, իսկ կոյն կ'մղէ երիվարը մինչև կղզւոյն ծայրը և դետը կ'մտնէ։

Սոյն ուղևորութեան առաջին մասն յաջող եք կը ունենայ, բայց քիչ ատենին հոսանքի զօրութիւնն այնքան կ'սաստկանաց որ Սղէլլո անհնարին ճիգ թափելով միայն կ'յաջողի դիմաղ բել այդ սաստկութեան։

Քաջ կենդանին իր տիրոջը կողմէ քաջալերուելով կ'մաքառի աննկուն և ուժգնութեամբ կ'լուղայ։ Բայց հոսանքը հետղինետէ աւելի ևս զօրանալու կ'սպառնաց։ Պէլա՝ որու աչքը հազիւ կարող կ'ինէր ընդնշարել զիւերայն դիմացի եղրը, մատայոց կ'նկատէ որ իր մատչելիք կէտէն հեռի՝ գետին լայնագոյն մասին վրայ մղուած է։ Բարերազզօրէն ձիուն ոտքն յատակը կ'գտնեն, այնպէս որ կենդանին կարող կը լինի ցամաքը ելնել։ Պէլա թոյլ կ'տայ ձիուն որ քանի մը վայրկեան չունչ առնու, ապա երկրորդ կզին կարելով կ'անցնի և անարգել կ'մտնէ վերջին թևն որու հոսանքը զրեթէ պննչան է։

Այն միջնոցին որ գետափին կ'մօտի՝ հեռուէն կը տեսնէ մարդաշատ լաստին գալուստը։ Զահերուն լոյսը կ'ցոլանայ ջրին երեսն և աղմակի ձայներ կ'հասնին իր ականջին։ Պէլա շուտ մը անտառներուն կողմը կ'զարնէ, որպէս զի զուարթազին խմբէն առաջ անցնի, լաստին մօտենալու վայրը գտնուող գիւղակին շրջանը կ'ընէ և Օրթի ճամբան կ'մտնէ։ Երբ մի անգամ անդ կ'հասնի, ճին կ'քչէ սրարչաւ դէպ յառաջ։

Գիշերակին մթութիւնը կ'աւելնայ իր չուրջը, վասըն զի ճամբուն երկու կողմէն մեծ անտառներ կը բարձրանան և կ'խափանեն լրւսնակին շառափղները։ Շատ անդամ կ'լուէ իր ձիուն սիրակներուն ներ-

Քեւ գետակներու վրայ շինուած մանր կամուրջներու
դրնդիւնը; Զուրն իր համազար եստէն անյած և մին-
չե իր կուրծքը թրջած է; Պէլա հաղիւ կզգայ այս
բանս; Քանի քանի անդամ անձրես մինչև ոսկորնե-
րան չէ անցած ուաղմական վարժութեանց ժամանակ՝
և ինք բնաւ հոր չեր ըրած:

Սակայն օդն երթալով փոթորիկ կսպառնայ և
Սակայն օդն երթալով փոթորիկ կսպառնայ և
չափազանց է ջերմութիւնը: Բաց աստի՛ բուռն կրակ
մը կշրջի իր երակներուն մէջ և այն դրեթէ սառ-
նագին բաղնիքն ոչ միայն չմեղմեր իր կրակն, այլ
կարծես թէ իր արեան զովութիւն տալով ոյժը կը
կրկնասպառկէ:

Դանուրէն շուրջ երկու հազարտեղը հեռու՝ Ով-
լս կնշմարէ իր աջ կողմն լայնանիստ չիք մ'որու-
թարձր տանիքը վշտակայ դալարուտ կոյտերէ վեր-
կենէ. Այս է ահա Օրթի դղեակը:

Իր առջևը կ'ատարածուի ցած պատ մ'որ կ'պատէ
արահետն և որ ունի ընդ առաջ ծառաստանը պար-
փակող լրբամ: Պէլա ձիէն վար կ'իջնէ, խիտ թիու-
տի մը մէջ կ'մտնէ՝ իր ետևէն քածելով քաջարի կեն-
տին լայն ծառի մը կ'կապէ զայն: Ապա վերս-
դանին և լայն ծառի մը կ'անցնի շրջապատէն անդին
տին կ'բռնէ արահետն, կ'անցնի շրջապատէն անդին
և դղեկին ուղղութեամբ կ'յառաջանայ ըստ բաղդի-
դէպի անտառները:

Երբ Պէտք խնդրեց Անդոնիակն որ երեքն լրեա
ըրած խսուտումն ի գործ դնէ, այս խնդրոյն զրդիուը
չը բնաւ այնակիսի զջացում մ'որով կրնար ամօ-
թապարտ մեալ։ Այդ անկեղծ սրտին մէջ ստղա-
նելի յոյս մը, հրապուրման թագուն խորհուրդ մը

Ճնած չէր բնաւ՝ ոչ առաջ և ոչ այն ժամանակ երբ
այդ փոխարինութիւնը հայցած էր իր ընդունած
վշտազին զոհաբերութեան համար. Թէ և խանդապին
կ'սիրէր նա, և թերեւս այդ անհուն սիրոյն համար,
երբէք չպիտի ներէր ինքն իրեն եթէ յանդդնէր
վրդովել իր սիրականին կեանքն և անոր մշտատե-
խզմի տագնատ պատճառել: Լաւ ևս պիտի համա-
րէր անոր տեսութենէ հրամարիլ քան թէ իր պատ-
ուանդանէն վար գլորէլ կուռք մը զոր կ'պաշտէր
բոլորանուէր:

ինչ որ խնդրած էր, ինչ որ տակաւին կ'անձկար ուրիշ բան չէր՝ եթէ ոչ մի ժամու պատրանաց արք- չուութիւնը վայելել, ժամ մ'որու յիշատակլ պիտի բաւել իր բոլոր կեանքը բարերասափիկ ընելու, վայե- լել իր սիրականն առանձին ունենալու անպատճեմ խնդութիւնը, կարծել մի քանի վայրկեան թէ իրն է այդ էակն, որքան որ կարձատեւ լինէր այդ վա- զանցիկ ու խափուսիկ ստացումը . . . : Իր փափաք- ներն այդ սահմանէն անդին չէին անցներ և Անդո- նիա չոփախի վշտանար որ Պէլահ վստահացած էր: Իրաւի՞ ասոնք այնպիսի զգացումներ են որ սովորա- բար հազուադիւտ են և կ'խոստովանինք նաև որ ծի- ծաղ կ'չարժեն, բայց թող ընթերցովը հաճի յիշել որ հոնքաբացի աղատանին ասպետական բնաւո- րութիւն մ'ունէր՝ հինաւուրց ասպետներու նման, և թէ փափկասիրութիւնն յետին աստիճանի կ'տա- նէր:

Պէլս զգուշացն թեամբ կ'քալէ ի մման՝ տերեւախիտ կամարի մը ներքե՛ խսկ երթ կ'հասնի անտառին ծայրը կանկ կ'առնու և կ'սկսի զիտել:

Եր առջև՝ յայնկոյս նեղ արօտի մ'որ լուսնակին
կապուտակ նշայներով կ'ողողի և որու վրայ կ'նկաս-
րուի խոչըր ծառերու ստուերը՝ կ'բարձրանայ լիալոյս
ապարան մ'որ ունի հիաջուք տեսք մը: Ամեն ինչ
լոին է և ի քուն կ'երեւի: Սակայն իր գ տնուած տեղ-
ւոյն հանդիպածայրը կ'կարծէ նա նշարել տեսակ
մը զարաւանդ աշտարակի մ'առաջին տստիկոնին
վրայ մեծ պատուհան մը բաց՝ որու ներքին կողմն
ընդ աղօտ լուսաւորուած կ'երեւի: Պէլա ակնարկով
կ'քննէ դղեկին ըթափատն և կ'սպասէ:

Պահ մ'եւաք հեռաւոր ժամացոյց մը, անշուշտ Օրի՛
զիւղի եկեղեցւոյնը, ժամը տասը կ'հնչէ: Գրեթէ նոյն
վայրկենին՝ Պէլա կ'տեսնէ փոքրիկ զուռ մ'որ կ'բաց-
ուի դղեկին կողմնակի ճակատին վրայ և կ'երեւի սե-
ստուեր մ'որ պահ մը կանկ կ'առնու սեմին վրայ, ա-
պա կամացուկ մը կ'իջնէ սանդ ուղին և վարանելով
կ'յառաջանայ ծառերուն ներքեւ՝ ստուերին մէջ կե-
նալով և մարդագետնին չուրից դ առնալով:

Պէլա եռանդագին կ'զիմաւորէ ստուերը և իր
զրկաց մէջ կ'ընդունի Անդոնիան թալկահար:

Պէլա կուզէ խօսիլ: Անդոնիա անոր բերնին վրայ
կ'դնէ ձեռքը՝ անձկանօք ածելով իր աշքը դէպ ի
լուսաւոր մեծ պատուհանը:

Անդ կ'զանուի քարէ նստարան մը Լո հանի՝ զրե-
թէ կրելով իր սիրականը՝ կ'առնէ կ'տանի զանի
դէպ ի այդ բաղմոցն ուր կ'նսաեցնէ և առջեւ ծունը
գնելով՝ կ'բռնէ ներա երկու ձեռքն և անսնց մէջ
իր դէմքը պահելով կ'ջանայ իր հեծեծ անքը խեղ-
գել:

Անդ ոնիա դիմէր թէ ինչ վտանգի ենթակայ կը
դտնուէր կատարելով խոստում մը զոր նորատի
աղջկան մը տղիտութեամբ փոքր ինչ թեթեակի
տուած էր: Սակայն չէր վարանած կատարելու իր
խոստումն Եւ ոչ իսկ քններ էր թէ մինչև ուր պի-
տի յանգին այն զիջումները զոր տրամադիր կը
երեւէր ընելու, այնքան մեծ էր վստահութիւնը Պէ-
լաի անկեղծութեան և զգացմանցն աղնուութեան
վրայ: Սակայն՝ թէ և վստահ և ապահով էր իրենց
դիտաւորութեանց սրբութեան մասին, թէ և կ'զգար
որ այս ժամազրութեան նոդատակն անարատ էր ու
անմեղ, զարձեալ չէր կարող սքօղել որ ամուսնա-
կան տեսակէտով իր ընթացքը բոլորովին անստգը-
տանելի չէր կրնար համարուիլ: Հետեադէս Անդո-
նիա բուռն այլայլութեան մ'ենթակայ էր, թէ և չէր
այն զերծ կերպ մ'անուշութենէ, որու մեկնութիւնը
պարտ էր փնտուել ոչ այնքան Լոմանիի մօտալրւա
տեսակցութենէ ընդունելիք երջանկութեան մէջ,
որքան այն խորհրդաւոր հրապոյին մէջ որ յարակից
է դիմազրաւեալ վտանգին և զոր նէ անդէտս կը
կրէր:

Անչափս սրտայոց՝ Անդ ոնիա անկարող էր իտակէս
վայելել սոյն տեսակցութենէ ակնկալած խնդու-
թիւնը — վասն դի ոչբաժանումն և ոչ իր նոր վի-
ճակին բերմամբ կենացը կրած փոփոխմունքը չէին
ամոքած առ Պէլա սէրն՝ ուստի՝ զրեթէ ուշաթափ
իր ձեռները կ'թողուր նորատի սպային հրատապ
գգ ուանաց:

Լութիւնն ու խաւարը կ'տիրեւին լիովին իրենց

շուրջը: Ամպերն քիչ քիչ դիզուած էին՝ մթաղնելով
ցայն վայր պայծառ երկարով երկինքը, և անձրևի խո-
շոր կաթիլներ ծանր ծանր կ'ընկնէին տերեւներուն
վրայ:

Այս մրրկալի օդին ջլատիչ ներգործութեամբ՝
Անդոնիած որու արհաւ իրքն սկսած էին ցրուիլ, շու-
տով այլակերպ յուզմամբ մը կ'համակուի: Մեղմորէն
զինք պաշարով արրշութիւն մը զոր չէ կարող զըս-
պել և ոչ իսկ անոր դիմաղ բել, կ'թուլացնէ իր ջլու-
րը՝ թողլով զինք անզօր . . . : Երբ յանկարծ հրա-
զնի մը պայմումը քիչ մը հեռառն կ'լուսի և նորա-
տի կինն ընկնելով յետկոյս՝ ձեռքը կ'տանի ճակա-
տին՝ միշ մ'արձակելով . . . :

Նոյն պահուն՝ Պէլա կլոր առարկայ մը կ'զգայ,
գեռ ևս եղի, որ իր ձեռներուն վրայ սահելով դե-
տին կ'զլըրի: Խույսն կ'փնտաէ զայն, կ'գտնէ և ջօշա-
փելով կ'տեսնէ որ կապարեայ գնդակ մ'է:

— Միթէ վիրաւուեցաք, կ'ըսէ Պէլա մեղմիկ և
արտօրնօք ոտք ելնելով. իսկ իր վշտագին ակնարկը
կ'յառէ սիրեցեալ էակին զէմբին վրայ՝ ընդ ունայն
ճիգ ընելով թափանցել խաւարն որ հետզիետէ կը
թանձրանար:

— Վիրաւորուած, ոչ . . . չեմ, կործեր . . . :
Բայց խոյս տուէք, շուտ խոյս տուէք կ'պատասխանէ
Անդոնիա անորոշ ձայնով մը, և իր անձն մոռցած
կ'երևի մի միայն Պէլաի հոգն ունենալով:

Անդոնիա դժուարաւ ոտք ելած էր: Լոմանի իր
կուրծքին վրայ կ'սեղմէ ահարեկ կինն և միասին կը
կենան անշարժ և անշունչ մատկ ընելով, սպասելով.

. . . : Բայց ոչ ոք կ'երեի . . . : Զկայ շուկ մը, եթէ
ոչ անձրևի կայլակներուն կաթիթուքն որ հետզհե-
տէ աւելի արագ կ'թափին աներւներուն վրայ: Ան-
դոնիա ու Պէլա միայնակ, բոլորովին միայնակ են . . .

Անդոնիա յանկարծ ջլատգութեամբ սեղմելով լու-
մանիի վիզը, իր թեւը կ'տարածէ դզեկին կողմը: Աշ-
տարակին պատուհանէն կ'երեի բարձր ստուերանկար
մը որ սեագոյն կ'զծագրուի լուսաւոր խորութեան
մէջ: Պէլա բնազդով կ'փնտոէ իր քովն անգոյ զէնք
մը, բայց շուտ մը կ'հասկնայ որ եթէ վասանգն այն
կողմէն է, չըրնար անմիջապէս իրենց հասնիլ: Եւ մի-
թէ այդ վտանգն անգամ իրական է: Այս հեռաւո-
րութեան մէջ՝ կարելի չէր որ մարդ ի մթան զիրենք
տեսնէ . . . : Հետեւապէս՝ այդ հրազէնի գնդակն
իրօք իրենց դէմ ուղղուած էր: Միթէ իրենց համար
էր այն մարած գնդակն՝ որու ձեռն ու չափը հին էին
ու անսովոր, որ նորաւոր կնկան ծնդաց վրայ ու-
տաստեր էր՝ անշուշտ դէմքին զարնէլին ետև: Այս
հաւանական չէր . . . : Եւ սակայն, ինչպէս բացա-
տրել . . . : Իր միտքը կ'մոլորի այլ և այլ ենթագ-
րութեաց մէջ . . . : Բայց վերջապէս՝ չեն կարող
անդ մնալ, հարկ է մեկնիլ . . . :

Անդոնիա փորձ մը կ'ընէ քալելու, բայց իր երե-
րուն ոտքն չեն կարող չիտակ կենալ: Այս ժամանակ
Լոմանի իր թեւերուն մէջ կ'առնէ Անդոնիան, ինչ-
պէս այն օրն երբ ի Պրուկ մահուանէ ազատեց դինք,
և այս պաշտելի մարմինը սեղմելով արրշութեամբ
իր լանջացը վրայ՝ կ'հասնի՝ անտառին եղրը բռնելով՝
այն դուռն ուսուկից ելած էր զզեկն:

— Կ'աղազեմ, կ'ողաղատիմ, խոյս տուէք, Պէլա
... : Ես բոլորովին լաւ կ'զգամ ինքզինքս, կ'կրկնէ
նէ անձնատուր լինելով՝ այս սիրադին ընդդրկման:

Եւ իր ձայնին հնչիւնն աւելի ևս մեղմելու համար
իր բերանն այնքան կ'մօտեցնէ երիտասարդին ա-
կանջին, որ սա կ'զդայ նէրա շնչին բուրումն իր այ-
տին վրայ իրքև անուշահոտ զըդուանք:

Բայց Պէլա սանդուղին բարձր աստիճանին վրայ
կանկ կ'առնու: Անդ չէր կարող հասնիլ այն անձին
ակնարկն որու երեւումն սարսափահար ըրած էր
Անդոնիան: Այն ժամանակ Լուսանի գետինը կ'դնէ,
իր երկու թևերով կ'ընդգրկէ սիրականն և դէպ նէ-
րա հակելով՝ իր շրթերը կ'զրոշմէ նէրա գեղձան ու
մետաքսանման գանգուրներուն վրայ որ կ'ծածկեն
իր ճակատը: Անդոնիա վշտազին թեթև աղաղակ մը
կ' ձնչէ և գլուխը յետկոյս դարձնելով՝ իր շրթերն
Պէլաթ համբոյրներուն կ'ընծայէ:

Իսկ Պէլա չէ կարող հեռանալ իր սիրականէն: Երբ
մեկնելու կ'պատրաստուի՝ իր սիրատը կ'խորտակուի
... : Ինչ մեծ վտանգի մէջ պիտի թողու նա Ան-
դոնիան: Միթէ իր պարտաւորութիւնը չէր միալ
անդ՝ նէրա մօտ՝ որպէս զի ի հարկին պաշտպանէ:
Բայց հասկցաւ որ իր ներկայութիւնը նորատի կնկան
համար մեծագոյն վտանգը կ'սպառնար: Ուստի՝
վերջին անգամ կաթոզին կ'զրկէ Անդոնիան, ապա
մեծաքայլ կ'հեռանայ՝ մինչդեռ թշուառ կինը կը
անհետանայ երերալով՝ դղեկին ներքին կողմը:

կ

Դանուք գետին մօտ՝ Շէօնաօրֆի գերդաստա-
նին փառաւոր հնօրեայ դղեկին առաջին դատիկոնն
լայնարձակ սրահ մը կար, որ վեշտասաններորդ գա-
րու ոճով կահաւորուած էր: Վառարանին դիմացը
կ'գտնուէր հսկայածե զինադարան մ՞որ ամեն տե-
սակ հին ու ճոխ զէնքեր կ'սլարունակէր: Արդի Շէ-
օնաօրֆի կոմսին գրասենեակն էր նաև այս սրահն ուր
նոյն իրիկուն կ'քալէր նա մեծաքայլ: Սեղանի մը
վրայ տրուած կանթեղ մը կ'լուսաւորէր սրահն: Շէ-
օնաօրֆի կոմսը միայնակ էր:

Կոմուհին կանուխեկ քաշուեր էր իր սենեակն՝
պատճառ բերելով սաստիկ անգար և յոդնութիւն՝
որով կ'տառապէր: Կոմսը մտատանջ և սրտայոյզ կը
շարունակէր իր պտոյտը՝ թէև գիշերը կ'տարածամէր:
Իսկ կանթեղը կ'լուսաւորէր խոր արտառութեամբ
դրոշմուած դէմքն՝ ամեն անդամ որ ինք անոր քո-
վէն կ'անցնէր:

Իրաւ է որ՝ իր մտմտուքն չէին կարող ամօքել ու
պարզել իր դէմքին սսմորաբար փոքր ինչ դաշան
բայցատրութիւնը: Մտովին կ'պատկերէր իր ամուս-
նութենէ ի վեր անցած ժամանակներն և կ'ըսէր ա-
ռանձին թէ այս միութիւնն իր ակնկալած ամեն
խնդութիւնները չէր տուած իրեն: Քաջ զիտէր որ
Անդոնիայի ձեռքը խնդրելու միջոցին չէր զրաւած
նէրա սէրը, բայց գէթ այն երեսովթական յօժարա-
մտութիւնն որով իր խնդիրն ընդունուած էր քաջա-

Երեք էր զինք յուսալ, և կ'սպասէր որ ապագային
մէջ այդ յօյսն իրազ ործուի:

Կոմսը կ'յուսար արդարեւ որ իր հոգածութեան և
սիրոց փորձերը կնկնապատկելով՝ պիտի յաջողէր ա-
ւելի գորովազին զգացմանց բերել այն քաղաքավա-
րական պաղութիւնն որով զեռատի օրիորդը կ'ըն-
դունէր իր մեծարանքը: Արդ՝ կոմսը քաջ ըմբռներ
էր որ վեց ամիս շարունակ ամեն ճիգ թափելէն
ետև, այս դիտաւորութէան մէջ քայլ մ'անգամ
յառաջ չէր գացեր, այնպէս որ իր վիճակն էր ճիշտ
այն աստիճանին մէջ երբ Վիէննայի արքեպիսկոպո-
սըն զիրենք պասեկը էր Օգոստինեանց եկեղեցւոյ
խորանին առջե:

Այս ևս իրաւ է որ կոմսուհին բնաւ դանդատա-
նաց տեղի տուած չէր կոմսին, ինչպէս որ ինքն ալ
երբէք արտունջ մ'ընելու պատճառ մը չունէր:

Սնդոնիա հլութեամբ համակերպեր էր այս նոր
կենաց, արտմազին ժպիտով կ'ընդունէր կոմսին
շուայլած խանդավառ պաշտաման ցոյցերը, մինչեւ
խոկ շնորհապարա կ'երեկը համելի լինելու համար
կոմսին կրած նեղութեան, բայց անկարող էր քօ-
զարկել անոր աղջած կատարեալ անտարբերութիւ-
նը: Յայտնի էր որ կոմսուհին չպիտի սիրէր երբէք
կոմսը: Նա ունէր միայն համբերատար ընկերուհի
մը, և միանդամայն հաւատարիմ — հաւատարիու-
թիւն որու վրայ ամենաթեթև կասկածն անդամ
չունէր — բայց չէր նէ այն անձնուիր և սիրացունչ
ամուսինն զոր իր կենաց կցորդելու երազած էր նա:
Եւ ոչ մի համակրական կապ կար անոնց մէջ: Վիէ-
նը կ'բաժնէր իրարմէ այս ամուսիրը:

Ի՞նչ կրնար լինիլ այս հակակրութեան պատճառը,
Միթէ կոմսուհին պահած էր սրաբն խորը յիշատակ
մ'որու դէմ յաւիտեան անզօր պիտի գտնուէր
կոմսը մաքառելու: Այս մտածմունքն իր սիրաը կը
մորմոքէր: Կ'ակնէն նա զանոնք, սիրող և սիրուհի
ձեռն ի ձեռին երկուսը միայնակ՝ մեծ եղիննե-
րուն տակ . . . : Միթէ իրաւ է որ զիրար կ'սիրէին
նրեմն սուտ չէին այն լուրերն զոր վերջն քաղած-
էր թէ անոնց մէջ գաղտնի համայնքութիւնն մը
կար: Ո՛չ, սուտ չէին անշուշտ: Այս, կ'սիրուէին: Նա
զիտէր, և այսօր ևս դիտէ զայն . . . : Այնպէս ձեռ-
ւացուց թէ չհաւտար այդ սիրոյն, թէ տղէտ էր լիո-
վին, որպէս զի ինքն իր խղճին առջև մեղապարտ
չերեի բարեկամի մը նկատմամբ ցոյց տուած անհա-
ւատարմութեան համար . . . : Կ'յուսար նա որ ժա-
մանակ անցնելով ամեն ինչ կարգի կ'մտնէ. . . : Եւ
բաց աստի մոլորադին կ'սիրէր նա. . . : Այս էր ահա
իր արդարացումը:

Կոմսը բոլորաբաց պատուհանին կ'մօտենայ և
դուրս կ'նայի: Իր աչաց առջև կ'պարզուի գալարի
ովկէան մ'որմէ հեռու կ'գտնուի մեծ զետին փոսը:
Հորիզոնին վրայ միտագոյն կապօյտ ատամնաձե դիմ-
ը կ'երեի ընդ աղօտ՝ պայծառագոյն երկնից երեսն
և կարծես թէ հեռուն կ'երկարի: Գիշերային զժոյն
նշոյներու ներքեւ որ արծաթափայլ չող մը կ'արձա-
կեն մեծ ծառերու անշարժ կատարներուն վրայ՝ այս
շքեցաւք դաշտանկարը անբացարելի մելամաղ-
ձութեան մը զոյնը կ'առնու: Յանկարծ՝ զիշերային
լութեան մէջ՝ ձայն մը լուկի կ'լինի . . . ի հեռուստ,

և մինչեւ իրեն կ'հասնի . . . : Հեռաւորութեան
շնայելով՝ կոմոը կ'հասկնայ թէ կ'երգեն ժողովրդա-
յին երգ մը՝ ծանր ու ողբացին ներդաշնակութեամբ,
որ կ'օգնէ Դանուբի նաւավարներու երկարատե-
նաւարկութեանց տաղտուկը փարատելու:

Կոմոը մտիկ կ'ընէ և աւելի կ'գուշակէ քան կ'լսէ
այս խօսքերը.

Երէ ճրբէն կ'նաւալէ ինհաներ,
Անվաներ եղեր, ո՛ իմ սերական,
Երբ հաւանէս մը կ'զշամ +եղէ հօր,
Կ'ծիշաղիմ ես ծեզ ժերէն շասման զբայ . . . :

• •

Թարո՞ է ձայնն ու հրամիր: Անշուշտ երդիչը սի-
րահար պիտի լինի . . . : Այս մտածմունքը կ'ծաղի
կոմմին մարին մէջ, և իր սրտնեղութիւնը կ'աւելնայ-
Շիւրեմն կան մարդիկ որ կ'սիրեն և կ'սիրուին . . . »
կ'ըսէ նա իւրովի բարկանալով, և կ'նախանձի ան-
ծանօթ նաւավարին վիճակին վրայ:

Բայց ձայնը լուեց, և այժմ ճամրուն վրայ ձիու մը
կանոնաւոր արշաւն է որ կ'հնչէ: Ծառաստանին մօտ
ձայնը կ'դադրի: Անտարակոյս ձիաւորն սկսածէ
ծանր ծանր յառաջանալ . . . :

Գրեթէ նոյն պահուն՝ ահա կ'չարժին կ'անցնին
գիւղական սայլակներու թափոր մը՝ որոց անիւներն
կ'սոտոստեն աղմկակի ճամրուն կոսկիձներուն վրայ,
մորակի կրկնակի շառանչումներ կ'լուուին և սրար-
շաւ երիվարներու վրնջունները: Կոմոը կ'տեսնէ նաև

մերթ ընդ մերթ ծառերուն մէջէն լապտերներու
կամ ջահերու շարժուն չողերն որ աչք թափորին
ընթացքը կ'լուսաւ որեն: Վլսէ երգեր զոր կ'ընդ հա-
տեն քրքիջներ և զուարթազին հարցումներ՝ որ ան-
շուշտ սայլակէ ի սայլակ կ'փոխանակուին . . . :

— Ուրեմն կան մարդիկ որ երջանիկ են, կ'ըսէ նա
վերստին իւրովի, և խնդալու պատճառ ունին . . . :

Այս երազային մտածմանց մէջ ընկզմած կ'մայ
կոմմն և իր աշերն անջրպետին մէջ մոլորած . . . :

Երկին կ'մթագնի: Անձրեկ քանի մը կաթիլներ
կ'սկսին վազիլ: Գիշերային թռչուն մը, դղեկին հին
պատերուն ընտանի մի հիւրն, ծանրապէս կ'թորի
պատուհանին առջեւ և երկու երեք մեծ շրջաններ
կ'զ ծէ, և իր լոին թևերով օդը զարնելին ետև՝
կ'երթայ թառիւ կաղնիի մը տերեւազուրկ կատարին
վրայ՝ որ իր ճիւղերը կ'տարածէ դէպ ի դղեակն:
Անդ՝ այդ թռչունը կ'սկսի երգել իր ողբազին և
գուժարեր երգը՝ կոմմին վրայ չեւտակի արձակելով
իր նայուածքն որ զիշերայն լուսաւոր կ'երեին:

Եէօնտօրիփի: վրայ այս տեսքն տխուր տպաւորու-
թիւն ընելով, իր ձեռքը կ'զարնէ որպէս զի թռչունը
թոփ երթայ, բայց չյաջողիր: Համբերութիւնը հատ-
նելով՝ կ'մօտենայ զինադարանին, հրացանակ մը կը
առնու: Գիտէ որ լեցուած է այն, կ'ուղղէ դէպի ի
թռչունն՝ որ միշտ կ'նայի իրեն անշարժ՝ և կ'քաշէ:

Սկահակին վառողը կամաց կամաց կ'բորբոքի և
հրացանակին բաւական ժամանակ անցնելին ետք
կրակ կ'առնէ: Գիշերային թռչունն՝ որու չզարներ
գնդակին՝ պ այթումէն կ'թորի և անհետ կ'լինի: Բայց

ծառաստանին մէջ՝ զրեթէ զզեկին ստորոտը՝ սուր
ճիշ մը կ'հնչէ:

Կնկան մը ճիշն է, այս մասին բնաւ տարակոյս
չկայ: Արդեօք գնդակը զարկած անձ մը . . . թերես
յետամանայ անցորդ մը: Բայց այնպիսի ժամանակ
երբ ամեն մարդ կ'քնանայ զզեկին մէջ՝ ո՞լ կրնայ
դուրսը գտնուիլ: Կարելի է սենեկապանուհի մ'է,
դուրսը գտնուիլ: Կարելի է սենեկապանուհի մ'է,
թերես խոհանոցի աղջիկ մ'որ սիրային տրշաւան
մ'ընելու ելած է: Բայց այդ ճիշն իրօք լո՞ց կոմնը
թէ ոչ այնպէս կարծեց որ լած է: Միթէ իր յուղ-
եալ զզայարանաց պատրանքը չէր այն: Ամեն ինչ
լուսութեան մէջ է նոյն պահուն: Ընդ ունայն ականջը
կ'դնէ: այլևս բան մը չլսեր: Անտարակոյս իր ականջը
զինք խարած պիտի լինի:

Եւ սակայն կոմնը շատ յուղուած կ'երելի: Աթէ
իրօք բան մը պատահած է . . . : Իր պարտաւորու-
թիւնը չէ դուրս ենել և աեսնել, ստուգել որ բան
մը չէ հասած, և եթէ արդարև զիպուած մը պատա-
ռը չէ հասած, և վրաւոր անձին օգնութեան հասնիլ: Արդէն
հած է, վրաւոր անձին օգնութեան հասնիլ: Արդէն
շատ դանդաղ կ'չարծի. պարտի որոշել և քննութիւն
մ'ընել: Ուստի սեղանին վրայ դնելով հրացանակն
մ'ընել: Ուստի սեղանին կ'մխայ, կ'առնու կանթեղն և
որու փողը տակաւին կ'մխայ, կ'առնու կանթեղն և
զզեկին սանդու զին վար կ'լջնէ:

Վարը՝ փոքրիկ դուռ մը կայ ծառաստանը տա-
նող. զայն կ'բանայ, կանթեղը կ'թողու սանդուզին
վերջին աստիճանին վրայ և դուրս կ'ելնէ, Գիշերը
բոլորովին մթնցած է և անձրեն կ'սկսի ուժին վա-
րիլ: Կոմնը կ'յառաջանայ ծառերուն տակ և քանի
զիլ: Կոմնը կ'յառաջանայ կողմն ուսկից կ'կարծէ թէ ա-
մը քայլ կ'առնու այն կողմն ուսկից կ'կարծէ թէ ա-

Ծառաստանը բոլորովին լռութիւն կ'տիրէ:

Կոմն ոչ կ'տեսնէ և ոչ կ'լսէ բան մը, եթէ ոչ
ձիռ մ'արշաւն ի հեռուստ: Եթէ իրօք ճիշ մ'ելած
է, անշուշտ զիշերային թափառիկ կնկան ճիշը պիտի
լինէր, արդիւնք հրացանակի պայլեռումին պատճա-
ռած երկիւղին: Հետեւ ապէս՝ ողբալի հետեւանք մ'ու-
նեցած չէ գնդակը:

Սակայն կոմնը միտքը կ'դնէ քննութիւն մը բանալ
հետեւեալ օրն որոյէս զի խմանայ թէ ո՞ր սպասուհին
յանդկներ էր՝ սիրային եռանդով մզեալ, այնպիսի
անպատէհ ժամուն դուրս ենելու: Կ'փափաքի այս
մասին ամեն կասկած փարատել: Կ'առնու վերստին
կանթեզը, դուռն ետեէն կ'զոցէ և սանդզէն վեր
կ'ելնէ:

Երբ կոմնը կ'անցնի այն գաւթէն որու վրայ կը
բացուի կոմսուհւոյն սենեկին դուռը, կ'խորհի որ
քաղաքավարական աններելի պակասութիւն մ'ըրած-
պիտի լինէր եթէ անփոյթ մնալով չերթար չ'արցնէր
կոմսուհւոյն թէ արդեօք անհանգստութիւնն դադ-
րած և զվար ցաւն անցած է:

Ո՛գիտէ, թերես լած էր և հրացանակի դժբաղդ
պայլթումն և . . . սիրայ թունդ ելած էր: Իր պար-
տաւորութիւնն էր այդ մասին անոր բացատրութիւն
մը տալ:

Նատ կարելի է նաև որ փողթորիկն՝ նոյն պահուն
սպատիկանալով հեռուն՝ և հետզհետէ մօտենալով, իր
ցաւերն աւելցուցած են . . . : Այսպէս կոմնը կը
հնարէ այլ և այլ ընտափ պատճառներ այս ուշկեկ
այցելութիւնն արդարացնելու համար . . . :

Թէև չուզեր նա խոստովանիլ, սրտին խորը վաստիորհուրդ մ'ունի, որմէ կ'չիկնի: Այդ չ՛, այդ անհնար բան է: Անշուշտ պիտի սպաննէր այն անձն որ այդպիսի ենթաղրութեամբ մը կոմուհւոյն պատռոյն արատ բերէր . . . : Բայց վերջապէս իրաւունքունի ստուգելու խնդիրը:

Կոմսն Անդոնիայի սենեկին դրան առջևն է: Պահ մը վարանելին ետև՝ ներս կ'մանէ առանց շուկ մը հանելու: Ակնարկ մը նետելով կնոջը վրայ բոլորովին սիրու կ'հանդարտի:

Անդ է Անդոնիա իր անկողնին վրայ տարածուած՝ դրսապատին կողմը դարձած: Եւ ոչ իսկ շարժում մ'ըրաւ: Անտարակոյս լսած չէ կոմսին մուտքը և խորունկ կ'քնանայ:

Եթէ կոմսն ուշադիր մտիկ ընէր և եթէ երկնից երկարատև գոռումներն ի հեռուստ՝ թոյլ տային իրեն ականջ դնել, անշուշտ պիտի լսէր թշուառ կնոջ սրտին բախմունքը:

Կոմսը ամօթապարտ մնաց իր կասկածներուն համար: Երանի թէ կոմուհին բնաւ չգուշակէր սոյն կասկածները . . . : Իր ոտից մատներուն վրայ քառելով դուրս ելնելու ժամանակ՝ կոմսը անզգուշութեամբ ձեռքը կ'կոթնցունէ թիկնամոռի մը յենակին: Որ ծածկուած էր իրարու վրայ նետուած ըզգեստներով՝ այնպիսի անկարգութեամբ որ ի սկզբան աշքէն վրիպէր էր: Իր մատներուն ներքեւ առուկ բան մը կ'զդայ:

Կոմսը կ'առնու այդ տամուկ առարկան ու կ'քննէ: Աւ առնթելէ լողիկն էր զոր կոմուհին սովորաբար

իր զիմուն վրայ կ'նետէ երբ ծառաստանն իջնէ քիչ մ'ուշկեկ, որպէս զի երեկոյեան խոնաւութենէն պահպանուի:

Կարծես թէ այդ լողիկը անձրեէն թրջած էր: Սև մետաքսէ պարեգօտին վրայ՝ որ մօտն էր և զոր կոմսըն այլայլութենէ դողդովուն ձեռնովն կ'օշափէ մըտատանջութեամբ, նոր վազած ջրի կաթիլներու միևնուն նշանները կ'գտնէ . . . : Բայց անձրեն ժամանումէկէն ետք սկսաւ . . . : Արդեօք իրաւ է . . . : Կասկած մը . . . ծանր քան կասկածն՝ վշտալ ստուգութիւն մը կոմսին սիրու կ'խորտակէ . . . արիւնը զիմին կ'զարնէ . . . : Ետ կ'զառնայ և ընդառաջ ծռելով՝ բարկութենէ դէմքն այլակերպած սոսկայի ակնարկ մը կ'արձակէ դէպի ի անկողինը:

Քնէած կինն անշարժ կ'մնայ:

Այն ժամանակ կոմսն ինքպինք գտնելով և իր բարձր հասակը ձիգ, զիմակը պաղ ու անթափանցելի՝ դատաւորի մը պէս ծանր ու կանոնաւոր քայլով մը զուրս կ'ելնէ:

Հազիւ թէ կոմսը սենեկին դուրսն է՝ որ դժբաղդիմն անկողնին մէջ՝ իրը զսպանակէ մը մղեալ, կ'ելնէ կ'նստի. ճակատը բոլորած է՝ իրը պատան՝ արտորնօք կապուած թաշկինակ մը, դէմքն կապտակոյն գեղնութիւն մ'ունի և իր առ սարսափ խորըցած աչերն կ'ուենուէ այն զբան վրայ որմէ ելնելով իր ամուսինն աներեսյթ եղած էր:

ի

Պէլս իր ճգած տեղը գտաւ ձին: Կ'քակէ զայն,
թեթևակի կ'նստի թամբին վրայ և սրարշաւ կ'մեկնի:
Շուտով կ'հասնի գետին եղրը: Անձրեւը բաւական
ուժին մէջ կ'տատանէր, կ'պայթի՝ թէն բաւական
հեռուէ: Արեմտեան կողմէ՝ Վիէննա քաղքին ուղ-
ղութեամբ՝ երկին մերթ ընդ մերթ կ'վառի կարմիր
նշոյներով՝ այնպէս որ կարծես թէ հրդեհ մ'է որ կը
կայծականց դղրդիւնն՝ երկնային արձա-
րանիի: Կայծականց դղրդիւնն՝ երկնային արձա-
րանիի: Կայծականց դղրդիւնն՝ երկնային արձա-
րանիի:

Պէլս քիչ մը հեռուն կ'տեսնէ լաստափայտն գե-
տափին կապուած: Եթէ գալու ժամանակ անխոհե-
տափին սեպեց մտնել լաստափայտը, ի դարձին
աւելի ևս զդոյշ սպարտաւոր էր լինել զայն բոնելու:
Իր գալուստն Օրթի դղեակը կրնար կասկած դրգ-
ու ու անշուշտ ամենէ առաջ լաստափայտը հարց ու
փորձի պիտի ենթարկուէր: Ասոր վկայութիւնը շատ
ծանր հետեանք կրնար ունենալ՝ եթէ յայտնէր թէ

կէս զիւերէն քիչ մ'ետք՝ ճիւաւոր սպայ մը գետէն
անդին անցուցած էր . . . : Ուստի՝ Պէլս՝ ինչպէս
արդէն ըրած էր, գեղակին չուրջը կ'գաւանայ՝ թող-
լով անօր տափակ ափին մօտ կեցած լաստն, ու ար-
գէն ցամաքն ելած տեղը կ'հասնի:

Նոյն միջոցին իսկ վորթորիկը կ'հանդարտի: Անձ-
րիը կ'զաղբի և լուսնակը կ'ելնէ ամողէ մը՝ Դանութի
հոսանքին վրայ ցանելով մանր չողեր և լուսաւորե-
լով դիմացի եղրն որ կ'տարածուի հեռուն իր մեծ
գիւղովն՝ այնքան աղմկալի ժամ մ'առաջ, և այժմ
լոին ու հանդարտ:

Բայց վորթորիկն հանդարտութիւնն երկար չուկերու-
թանկարծ բուռն հով մը կ'սկսի վշել՝ գետին երեսը
լուսաւոր կոհակներ կ'փրփրէն, հեռուն կ'քչուին
մրոտ ամպեր որ կարծես թէ արագութեան պայքար
մը կ'մլեն երկնից դեսես պայծառ մասերն արշաւե-
լու: Մրրիկն վերստին կ'գոռայ: Այս մութ ու շար-
ժուն կամարին ներքեւ խաւարը զրեթէ կատարեալ է:

Բայց Պէլս հոգ չըներ բնաւ: Փոքր ինչ առաջ
պատահած օդի հանդարտութեամբ կարող եղեր
էր իր ճամբան գտնել: Այս կ'բաւէր իրեն. վարա-
նելու հարկ չկայ: Ինչ որ արդէն մի անդամ ըրաւ,
վ'րստին կրնայ ընել, և բռնաշունչ հովը չպիտի
զորէ արդիւել իր ընթացքը:

Պէլս տենդային իջէ մը կ'զգայ հեռանալու այդ
ափերէն . . . : Եթէ դիպուած մը, եթէ հանդիպուած
մը, պ'ստահար մը երեան հանէր որ ինք գետին այս
կողմը ներկայ կ'գտնուի, իր այս ներկայութիւնն
առսկալի նշան մը պիտի համարուէր . . . : Իր անխո-

Հեմութեան պատճառաւ կարծէ տեսնել Անդոնիան
կորսուած, մինչև որ գետն նէրա և իր մէջ չգըտ-
նուեր . . . : Այն ժամանակ միայն պաշտելի կինն
ապահով վիճակի մէջ պիտի համարէր . . . : — Օ՞ն
անդր, իմ քաջ Աղէլօ, նէրա համար է . . . : » Եւ
Պէտք սեղմելով ձիուն կողէրն իր որունքով ջուրը
կ'մտնէ արխարար:

Գետին տռաջին թևէն կ'անցնի նա առանց մեծ
դժուարութեան: Սակայն կարծածէն աւելի կ'չեղի
համբէն՝ հոսանքին պատճառաւ որու զօրութիւնը
ստատկացած էր հովին մզմամբ: Կղզւոյն վերին
ժամբը կ'ելնէ նորէն: Աղէլօ դժուարաւ կ'քաէ ա-
ւազին մէջ, կ'սահի տղմուտ հողին վրայ՝ երբ գետե-
զրէն կ'հեռանայ, և ի միտան կ'գայթի ծառերու ար-
մատներու մէջ:

Փօթորիկն յանկարծ կ'ալայթի կատաղօրէն: Հով
մը կը փչէ մրրկալի, ալէկոծ՝ և գուժալի գոռումներ
կ'արձակէ: Այնպէս կ'թուի որ անտեսանելի ձեռք մը
ծաւալեր էր յեղակարծ երկնից տարածութեան
վրայ ու անթափանցելի վարագ ոյր մը: Հեղեղանման
անձրւ մը կ'վսզի և ջուրը մտրակելով կ'ճշփզիէ:
Շանթն՝ ահեղ ու սուր չանդով մը՝ կ'ծրագրէ յան-
կարծ ամբուն վրայ հրային ահազին զիկզակ մը, կղզ-
ւոյն միւս ծայրն կ'իջնէ, կ'զարնէ բարձր սօսի մը և
զայն խորտակելով գետին կ'տապալէ: Անընդ հատ
կ'յաջորդեն իրալու վայլակ, որոտում ու ամպրուզ:
Այն միջոցին որ կապտագեղ լոյսն զիշերային ան-
թափանց խաւարին հետ փոփոխակի կ'ընդ հատին,
համայն հորիզոնը կ'երւի, կ'երևի գետն՝ որ ծովագ

չափ անհուն երեսով մ'առած է, կզզիներն՝ իրենց
մած ծառերով որ հովէն կ'գալարին ու վար կ'հակին,
կ'երեին երկին և իր սեամթոյր ամպերն որ ահեղա-
գոչ մրրկէն կ'քաւին հեռուն: Բնութեան տարբներու
այս աէկոծ վիճակին մէջ՝ գետէն անցնելու փորձն
արդարե յիմարական ձեռնարկ մ'էր՝ որու առջն
ուրիշ ան և մը քան Լամանի պիտի ընկրկէր: Բայց
այդ պիտի բան մ'անոր մաքէն իսկ չանցաւ:

Գետին աջ կողմին ելնել, զդալ որ իր սիրած կինն
վտանգէն ազատէ, այն վտանգէն որու ենթակայ կը
մնար նէ քանի ինք ներկայ գտնուէր Օթի շրջակա-
ները, Պէլաի համար անյողողդդ դաղափար մը, ան-
զուսպ պաշարում մը զարձած էր: Նա չպիտի սպա-
սէ իսկ որ փոթորիկը հանդարտի: Այլևս չբանադա-
տէր նա: Գերագոյն զօրութենէ մը մղուելով՝ ընդ
առաջ կ'սուրաց: Պէտք է որ անցնի զետէն, և պիտի
անցնի:

Փայլակներու լրւսին չնորհիւ Պէլա որոշեց իր երկ-
րորդ մեկնակետն, և Սղէլօն այն կողմը կ'ուղղէ: Բայց
երիփարը վտանգէն վախնալով կամ զզալով որ ու-
ժաթափ կ'ինի, թերեւս գերազ ոյն ազդարար բնազ:
Դումով մ'որ ստէպ վտանգի նախազդացումը կը
տայ աւելի կենդանիներու քան թէ մարդկան, կ'զի-
մազրէ և զետը մտնելու կ'մերժէ: Երկու անգամ
ազնիւ կենդանին կ'ձախրէ, և Պէլա առաջին անգամ
կ'ստիպուի խթան զործած էլ: Աղէլօ կ'հնաղանդի և
մտնելով զետը կ'սկսի լողալ:

Բայց զետափէն քիչ մը հետի, զետն՝ որ վազած
յորդառաստ անձրւեներէն ուռած էր՝ ահսելի արա-

դութեամբ կ'հսոսի: Զին ուժգնապէս կ'մաքասի բաց
հաղիւ կ'յառաջանայ: Նատ չանցնիլ յոդ նութեան
ակներեւ նշաններ ցոյց կ'տայ: Քանի քանի անգամ իր
զըռեխը ջրին տակ անելւոյթ կ'ինի: Այս յուսահա-
տական պայքարն մնացած դոյջն ինչ ոյժն ալ կ'ըս-
տառէ, և Պէլա կ'հասկնայ որ՝ հոսանքէն մկուելով՝
նկուն և յոդնարեկ՝ ձին ընդ առաջ կ'քըուի և շուտ
շուտ կ'չեղի: Հրավառ երկն ից ներքեւ՝ ընդ ազօթ կը
նշարէ հեռուն, շատ հեռուն՝ այն կղզին որու վրայ
կ'յուսար ելնել:

Տարօրին բանդագուշանօք՝ այնպէս կ'թուի Ոլեայի
թէ ինք անշարժ է և թէ կղզին է հոսանքն ի վեր
ենողը, այնքան շուտ՝ որ զիշերայն խոյս տւող ու-
րուականի մը կ'նմանի: Օ՞ն անդք, տարակիոյ չկայ որ
կենաց վտանգ կայ. բայց իր հոգին անվեհեր կ'երեւի
այդ վտանգին առ չեւ:

Պէլս ասպանդակները կ'հանէ, թեթևակի չուրը
կ'իջնէ բռնելով ձիուն բաշն և ինքն ալ կ'սկսի լո-
ւալ: Կենդանին՝ բեռէն թեթևած, քիչ մ'ոյժ կը
առնու և մի քանի կանգուն յառաջ կ'երթայ: Բայց
իր վերջին ճիգն է այս: Պէլս ընդ ունայն կ'զրգուէ
իր ձայնովը. ինքն ես՝ իր համազգեստէն նե-
ղոյն իր ձայնովը. ինքն ես՝ իր համազգեստէն նե-
ղոյն իր ձայնովը. կ'լուզայ և մեծ նեղութիւն կը
զուելով՝ զ ժուարաւ կ'լուզայ և մեծ նեղութիւն կը

Ար իր կորուստը մօտալուտ է:
Եւ մեռնելու միջոցին՝ Պէլայի աշոց առջև կ ներ-

կային իր երիտասարդութիւնն և մինչև անգամ
մանկութիւնը, բոլոր այն գեղեցիկ տարիներն որ
ծնունդ տուած են ոսկեգոյն երազներու, սիրուն
յոյսերու և պատրանաց: Մտովին կ'տեսնէ նա վերս-
տին այն հունգարական մեծ դաշտերն ուր սրաբաւ
ման եկած էր օդը ծծելով լիարերան, այն ընդար-
ձակ դաշտերն ուր այնքան նախճիրներ գործած էին
իր նախնիք, Լոմանիի ազգատոհմն, որ իրեն հետ
պիտի մարի: Պէտք անոնց պէս մեռնելու երազած
էր՝ բաց արևեռն . . . և չէ թէ այսպէս փառազուրկ
մահուամի՛ մութ դիշերուան և աղմուտ գետի մը
մէջ . . . :

Եթէ ոչ իր հայրենի երկրին, զէթ նէրա համար
է որ կ'մեռնի, և կ'մեռնի սիրուած . . . : Այսպիսի
ճակատագիր մը միթէ չչ միշտ գեղեցիկ . . . : Ապա
աշխարհային բաներէ հեռանալով՝ իր հոգին կ'քարձ.
րանայ դէպ ի Արարիչն և գերազոյն ազօթքով մը
կ'հայցէ անոր զթութիւնը . . . :

Մըրիկը անցաւ, անձրև ու փայլակ դաղը եցան: Ան-
ամպ երկնից երեսը լուսնակն կ'երևի գեղաժպիտ՝
աւելի շողողուն քան երբէք. իսկ իր ճառագայթնե-
րը կ'լուսաւորեն՝ մեծ ու դեռևս ալէկոծ գետին ե-
րեսը ծաւալող բեկեալ միւզերու և ամեն տեսակ
բեկորներու մէջ՝ ծիաւորին և իր ծիուն անկենդան
մարմիններն՝ որ ջրին շաւզին կ'հետեւին, հոսանքէն
գլորելով, աղմուտ կոհակներէն տատանելով և կի-
սովին ջրամոյն:

թ:

Հոծ բաղմաթիւն մը՝ կ'խռնի Տրադէր փողոցին
մը՝ Գարլ-Թատրոնի լրսափայլ ճակատին՝ առջև։
Կազին անախորժ լրսը կ'զրոցմէ դիմաց վրայ իր
վառվառն նշոյներն և սալարկին վրայ կ'հատանէ
ու ստուերներ որոշածիր։ Ահա այն իրիկունը պիտի
տրուի վիշնանական բարձր ընկերութեան կազմաւո-
րած չքեղ ներկայացումն՝ ի նպաստ Դէգէլի ողողե-
լոց վասնզի այս է իրօք Դանուրի ողողմամբ աւեր-
ուած՝ զիւղին անունը՝ զրո չէր կրցած միտքը պա-
հել պատուական Քամիցն՝ ի մեծ ցաւ Ալդէնսդէյն
Եխմանուհոյն։

Համբաւ ելած էր թէ այս ողորմասիրական հան-
դէսն պիտի գերազանցէր իր չքեղութեամբ մինչև
այն որ տրուած համանման հանդեսները։ Հետեա-
պէս դուրսն անհամար էր հետաքրքիրներու զրոհն,
թէև ասոնք ուրիշ հաճուք չունին վայելել, եթէ ոչ
թատրոնի ճակատին վրայ փայլող լրսաւոր լարերուն
տեսքը և կառաց անցքն, ուսկից մեծ դրան առջև
կ'իջնէին ներս մանելու հրաւիրեալ բաղդաւոր մահ-
կանացուները։

Թատրոնին զրասենեակները գոց էին, համակ
սրահը կանխուա վարձու բոնուած լինելով։ Ամենէ
անշուք տեղերն անգամ՝ թէև մեծ աղին, առնողներ
գտնուեցան։ Առատ եղած էր անշուշտ հասոյթն, և
կ'հաւաստէին թէ՝ 30 հազար ֆիորինն անցած է։

Դէղադէզ ծաղիկներով և բոյսերով զարդ արուած-
դաւթէն կ'մոնեն նորեկ հանդիսականներն ըքեղօրէն
լրսաւորւած սրահը։ Եռապատիկ յարկով օթեակո-
ներն ուր նստած էին պերճօրէն հագուած ու չքուած-
կանացք, իրենց ուսերն ու թերթ մերկ, ակնախատիլ
կիսաշրջանի ձեռվ կ'պարզուէին աչաց՝ բիւրեղեայ
գնդակներով զարդարուն աշտանակներու ներքեւ։
Անդ ներկայ է Վիշննայի ազնուական դասն, որ բըռ-
նած է բոլոր սրահն, մէն մի հանդիսական պատրաստ
իւրայնոց ծափեր չուայելու՝ երբ որ ժամանակին տես-
սարան ելնեն։

Սրահը լի է, և վարագովը դեռ ևս կ'դժկամակի
բացուելու, թէև հարկ էր որ բացուէր՝ առ նոււազն
կէս ժամ առաջ։ Սակայն և ոչ մի հանդիսական
տրատունջ կ'յայտնէ։ Ի՞նչ իրաւամբ որ մարդ բուն
արուեստագէտներէ ժամապահութիւն կ'պահանջէ,
չէ կարող նոյնպէս ճշտութիւն պահանջել զանազան
տարրներէ կազմուած թատերական խմբէ մը։ Միւս
կողմէ սրահին ակնապարար տեսքն այնքան ուշգրաւ-
է, որ հանդիսականը մտազիւր կ'յորդորուի համբե-
րութեան։ Նոյն պահուն փոխադարձ տեսահանդէս
մ'է որ կ'շաբունակուի։ Դիտակները կ'ծորին գէպ ի
երած շտարանի թեաթրոններն և ապա կ'բարձրա-
նան դէպ ի վերնատունն՝ որ այնքան վայելուչ ու
գեղազարդ երեսյթ մը կ'ներկայէ որքան ստորին
օթեակները։

Մի օթեակէ միւս օթեակն ընտանի թեթև բա-
րեներ կ'փոխանակուին և ժպիտով մը կ'չետուին։
Զոր ձայնով մը բացուած ու փակուած հովահարնե-
րէ

բու դռնշիւնին կ'խառնուի կիսաճայն խօսակցութեանց շիօթ ու մեզմիկ մրմունջը: Կանխաւ մեկնութիւններ կ'արուին ներկայելի տեսարանին վրայ: Նութիւններ կ'արուին ներկայելի տեսարանին վրայ: Երազեկ անձեր կ'նկարագրեն ազդեցիկ տեսիլներն ու հագուստներն, ծրագիրը կ'քննուի, որ գրուած է քառակուսի և Գանուրեան կապոյտի գունով մաքառակուսի մը վրայ՝ կոկիկ պատկերներով զարդարուն: Գաղաթի մը վրայ՝ կոկիկ պատկերներով զարդարուն: Բարձրաձայն կ'կարդան շատեր նշանակուած անուններն և մէն մի դերասանի կ'ուզուին անդուլ համարական կամ կծու դիտողութիւններ:

Բայց անտարակոյս այս գիշերուան ամենէ հրապուրելի դէպքը պիտի լինի Շէօնարօք նորատի կոմպուտիւնը՝ վերջին կենդանի պատկերին մէջ: Հազիւ մի քանի անձեր կրցած էին տեսնել զինքն՝ վիշնայ վերադառնալին հետէ: Իր դեպական վրայ, որ այսօր, ինչպէս կ'հաւաստեն, կատաղոյն վրայ, որ այսօր, ինչպէս կ'հաւաստեն: Խնարելութեան հասած է, զբայլմամբ կ'խօսին: Խնարելութեան այս կերպ հանդիսաւոր մուտքն ընկերութեան մէջ, առաջին անդամ ցոյց տալով ինքինք հանդիսականներով լի սրահի մը՝ իր գեղեցկութեան բոլոր փայլովն և ուշադրաւ չքեզ արդ ու զարդին՝ բնապէս տարօրինակ կ'երեկ և ամենուն հեղովն՝ բնապէս տարօրինակ կ'երեկ և ամենուն հեղովն՝ յետին ծայր կ'շարժէ: Բաց աստիւաքը բոլոր փայլովն և ուշադրաւ չքեզ արդ ու զարդին՝ բնապէս տարօրինակ կ'երեկ և ամենուն հեղովն՝ յետին ծայր կ'շարժէ: Բաց աստիւաքը բոլոր փայլովն և ուշադրաւ չքեզ արդ ու զարդին՝ բնապէս տարօրինակ կ'երեկ և ամենուն հեղովն՝ յետին ծայր կ'շարժէ: Այս ու այն կ'պարծի թէ այդ զըոյցը լսած է նոյն ինքն բամիկայ բերնէն և հարիւր անդամ կը

սղատմէ՝ փոքր ինչ նենգամիտ յօժարտմտութեամիւմը: Փիչ մ'ես և խորհրդաւոր գոհարով երեւան պիտի գայ կոմսուհին: Առանց աւելորդապաշտ լինելու շատեր կ'պնդէն թէ անխոհեմութիւն է՝ խորհրդաւոր բաներու հետ խաղալը: Վերջապէս շատեր համամիտ կ'գտնուին ու կ'ըսեն թէ նորատի կնկան ընթացքը շատ ծանր ու յանդուզն զործ մ'է: Արդարեւ՝ բերուզակն այս երեսկոյթին ամենէ կարեւոր և մտազբաւ առարկան է:

Վարագոյրին ներքնակողմն անհնարին շարժում կ'տիրէ: Տեսարանին վրայ՝ փայտորմներուն շուրջը և վիժակներուն մինչև կ'տարուքերի աղմկալի ամրում մը՝ որ ապշած մեքենապետներուն նեղութիւն կը պատճառէ: նոյնպէս կ'երթեեկեն արդէն հագուած զերասաններ, որ կ'վարժին այլ և այլ շահաւէտ զիբք բռնելու, պարաւորներ՝ որ աւտորօ-հունզարական աղնուապետութեան մէջ նշանաւոր անուն ունին, ապա արտօնաւորներ՝ որ բացառիկ չնորհով ընդունուած են թաքրոնի կողմուողիներուն մէջ՝ որ՝ թէ և իսկզբան սակաւաթիւ պիտի լինէին, անհամեմատ կ'բազմանան: Վիշնանայի ամենէ անուանի հերյարդարներն և սենեկապանուհիներն՝ որ այլափոխուած էին զգեստագիրներու՝ կ'ըջին բազմահոգ: Թաքրոնի սովորական արուեստագէտաներու օթեակներուն մէջ կ'երեկին միօրեայ զերասանուհիներ որ իրենց սիրուն զէմբին վրայ այնպիսի ճարալիքութեամբ կ'տարածեն շպարի որով ցոյց կ'տան ունանք թէ շատ վարժ են այս մասին:

Պայիկային հանդիսավոր պիտի բացուի տեսարանը:

Առյն հանդիսի հեղինակներն՝ Ալզ էջնսդ էյն իշխանն
ու Մէլսի դերկոման՝ որ կ'բազմապատկին և իրենց
թարգմաններուն կ'ըսայիշն վերջնական հրահանգ-
ներ՝ յատկապէս ծանրանալով տեսլական մի քանի
ձեւերու վրայ որոց ներդործութիւնն անդ իմադրելի
պիտի լինէր, ինքնին շատ աւելի մտայոյդ և անհան-
գիստ են քան ինչ որ առ երեսս կուզեն երեխլ։ Եշ-
խանուհին որ՝ արդ էն առաջին արարի հագուստովը՝
պատրաստ է տեսարան ելնելու, կ'սաստէ յետամիա-
ները, սիրտ կ'ատյ վեհերոտ ու տատամոտ դերա-
սուհիներուն, կ'յանդիմանէ անխնայ և դէպի սրահը
կ'վանէ անգթարար այն տաղտկամի հանդիսական-
ներն որ անդ եկած էին առանց ու և է իրաւունք ու-
նենալու։ Մինակ՝ Օկուսդա՝ փոքրիկ իշխանուհեւոյն
կ'սպասեն։ Նէ ևս կ'համնի վերջապէս՝ զարմանալով
որ այնքան ու շացեր էր և թէ այդ յապ սղմոն համար
հարիւր գիորին տուրդ անքի կ'ենթարկուէր, ի նպաստ
ողոգելոց։ Եւ ահա ամեն մարդ պատրաստ է։

Մէլսի երաժշտական ալոշտօնին յատուկ ցուզը
ֆեռք առնլով՝ արուես ոին կանոնին համեմատ զատ-
զատ միջացներու մէջ՝ կ'զարնէ երեք ամուր հարուած-
ներ։ Նուագախումբը կ'սկսի բացման եղանակին և
երբ վերջին նուազը կ'աւարտի՝ վարադոյ ըը ծննդ-
ժամը կ'բացուի չքեղազարդ տեսարանի մը վրայ ու-
կներկայէ նիմնկը կամ վիճննայի պուլվարը քաղքին
ամենէ չէն վայրը։

Գժուարին պիտի լինէր ՆէգէւԸսնէնէ համառօտա-
գիծ նկարազիրն իսկ ընել։ Այս ծաղրաբանական
երկն՝ արդ իւնք երկու որդամիտ մարդոց աշխատակ-

ցութեան, կ'վստար չողուն և սուբ խօսքերով և մի-
անդ ամայն անակնկալ դաւերով։ Կատարեալ եղաւ
յաջողութիւնը։ Յատերախումբը՝ տեսչուհուոյն օրի-
նակէն և հանդիսականներուն քաջալերական աղա-
զակներէն ոգեսրուած՝ հրաշալի խանդ ու եռանդ
ցցուց Այս իրաւ է որ Օ՛լուսդա իշխանութիւն երկու-
անդամ ժամանակին տեսարան չելաւ, բայց Աղջին-
ոյ էյն՝ որ բարերազզ օրէն ներկայ էր, երկու անդա-
մուն ալ շարունակեց անպատճաստից տրամախօսու-
թիւն մը զօր հեղինակներն իսկ անյարմար չպիտի
գտնէին, մինչդեռ հանդիսականներուն համար ան-
տես անցաւ և որոտնդուստ ծափահարութեամբ աւ-
մենքը յայտնեցին իրենց գոհունակութիւնը։ Երբ
վարագ ոյրն իջաւ՝ վերջնական շրջտազէն ետք՝ որով
կ'աւարտէր երրորդ արարը, բոլոր դերասանական
խումբն ի տես կօշուելով, հանդիսականներուն ցըն-
ծագին ծափէրն ընդունեց։

Ինչպէս յայտնի է, երեք գեղատեսիլ կենդանի
պատկերներ սիմոֆ աւտրուիխն այս ներկայացումքը:
Արդէն Մաքարտի և Անժէլի, այս երեքի պատկեր-
հանները կարդաղրած էին թէ ի՞նչ կերպով պիտի
խմբուիխն քսանէն մինչև երեսուն անձինք մէն մի
պատկերի համար, ինչպէս որ պատրաստած էին հա-
գուստներուն տարազն՝ որ մեծ մասամբ թանկադին
կերպասէ շինուած էին: Խոկ արքունի թանդարանէն
տառած էին հին դեղեցիկ զէնքեր: Այս արտասովոր
չքաղրութիւնն ելեկարական լուսոյ ներքեւ՝ յառաջ
պիտի բերէր, ինչպէս իբօք բերաւ, հմայական տպա-
չորութիւն մը:

Բաւական երկար միջնարարէ ետք՝ վարագոյրը
բացուեցաւ, և ապա հետզհետէ իջաւ սաստիկ ծա-
փահարութեանց մէջ առաջին երկու պատկերներուն
նըրկայացումէն վիրջն, որոց մին կ'ալստիկերէր այն
հանդէսներն որ կատարուեցան երր լևոն դաքոն
հիմնեց լեմուկէրի քաղաքը, միւսը՝ վաշլ'սդէնի բա-
նակն՝ որ Երեսնամեայ պատերազմի համազդ հստներն
ի հանդէս հանելու հետաքրքրաշարժ պարագայ մ'է:
Ամեար միայն պատկեր մը, այս է «Մարդարիտ իշ-
խանուհույն գալուստը Հունդարիոյ թագաւոր Պէ-
լայի արքունիքը»: և այս այն պատկերն էր որու ան-
զուսպ անհամբերութեամբ կ'սպասէին հանդ իսա-
կաններն և որու մէջ պիտի երևէր Շէօնտօրֆ գե-
ղանի կոմսուհին:

Անդոնիա և իր ամուսինը դեռ առաջին իրիկուն
մտեր էին վլիչննա: Տակաւին չէր անցած քառսուն
ութ ժամ այն չարաշուք զիշերէն ի վեր՝ երր Պէլա
և նէ հազիւ մի քանի վազրկեան տեսակցեր էին: Այս
երկու օրերն դեռատի կնկան անշափ երկար և դառն
երկցեր էին, վասն զի իր մտաց մէջ կ'դառնային
անդուլ երկիւղալի խորհուրդներ: Դեռ ևս չէր դադ-
րած այն սարսափն որով համակուեր էր նէ այն մի-
ջոցին որ կոմսն իր սենեկին մէջ պահ մ'երկցեր էր
լուռ ու մունջ, մինչդեռ ինք սուտ քուն եղած էր:
Արդեօք կառկած մ'ունէ՞ր անցած դարձածին վրայ:
Այս էր յարայամ իւրովի ըրած հարցումն մտա-
տանջ, թէւ կոմսը բնաւ իր վարմունքը չէր փոխած,
քանի որ իր սովորութեան համեմատ, միշտ յարդա-
քանի կոմսը բնաւ կոմսէր փոյթ կ'ցուցնէր իրեն, թէւ

նէ կ'կարծէր աեսնել իր ամուսնոյն այս ընթացքին
մէջ տեսակ մը կեղծիք՝ զոր իր կնային բնազդովը
կ'գուշակէր:

Անդոնիա շատ աւելի լու պիտի համարէր որ իր
ու ամուսնոյն մէջ կոիւ մը ծագէր քան թէ այս ան-
ստուգութիւնը կրէր: Ի՞նչու համար կոմսը չէր հար-
ցաքններ զինք: Պատրաստ էր նէ ամեն բան ճակա-
տարաց ըսելու, իրու կին մ'որ անպարտ է և իր
խիզը հանդարտ: Միթէ կոմսը կ'սպասէր որ կաս-
կածները հաստատուելէն ետև խօսի: Միթէ կ'յու-
սա՞ր գտնել այն լոյսը զոր կ'փնտռէր և չէր գտնէր
այն թատերաբեմին վրայ ուր նէ Պէլայի հետ դէմ
առ դէմ պիտի երեւէր: Արդեօք կոմսը միտքը զրեր
էր քննել իրենց դիրքը՝ դիտել իրենց դէմքը . . . :
Եւ Անդոնիա կ'խորհէր ահարեկ որ լոմանին վերա-
տին տեսնելով՝ մի գուցէ անկարող լինի ինքովիք
զսպէլ:

Առաջի օրէն ի վեր՝ անշուշտ կ'զգար, այն բուռն
այլայլութեանց պատճառաւ որով համսկուած էր,
թէ անքացատրելի փիզիքական տանջանաց ենթակայ
էր: Կոկտալի ցաւ մը կ'անցնէր մերթ ընդ մերթ իր
կուրծքէն, մինչդեռ իր սիրտը կ'զարնէր անսովոր
ուժգնութեամբ և արագութեամբ: Չէր հաղորդած
նէ ուրիշ իր վիշտն որ կարծէր նէ թէ անցաւոր էր,
և այնքան խնամօք կ'ծածկէր զայն որքան որ անյշ-
լայլէլի կայտառութեան մը քօղին ներքե կ'պահէր
զինք պաշարող բարոյական կոկիծները:

Կանուխկեկ թատրոնգ նալով՝ Անդոնիա հագեր էր
արդէն Փրանսացի իշխանուհուց մը փառաւոր հա-

գուշտը և կանգուն կեցած էր զարդարինի մը մօտ:
Խր չորս դին բոլորի էին շատ անձեր, և ինք կ'սպա-
սէր որ տեսարան ելնելու ժամը հասնի:

Մինչդեռ ականջ կ'դնէ անուշաղիր իր շորջը
գտնուող անձանց դովեստներուն, իր ակնարկը կը
թափառի աջ ու աչեակ լումանին մինտոելու նպա-
տակաւ, և կ'զարմանայ որ զանի շտեսներ: Աքան-
շեմ է Անդոնիափ արդ ու զարդն: Հագած է նէ ար-
ծաթաթել դիսակէ պարեզօտ մ'երկարատուան ու
քառաձեւ: իր կոճկէնը բաց է և ցոյց կ'տայ վզին
ճիշտ բունը, մերկ են թեսերն որ գուրս կ'ելնեն լայն
ու կախ թեզաններէ: Մարդարտեայ ցանցակերա
մը կ'զարդարէ չըջազդեստին առաջն, որու ձախ դին
ֆրանսայի երկնագոյն զինանշանի վահանակն հիւս-
ուած է եռածաղկեայ ոսկեհուռ շուշանով: Իր սքան
չելի գեղձանիկ մազերը ճակտին վրաայ ամիոփուած
և երկու հոծ գիսակի ճեռվ հիւսուած, կ'բոլորեն իր
դէմքն և զրեթէ մինչեւ ոտքը կ'իջնեն: Յետ կոյս՝
կ'ծածանի շղարշեայ երկայն քօղ մը ոսկեթել և ար-
ծաթաթել, որ ադամանդեայ մեծ շուշանով մը
կցուած է գլխուն գագալին վրայ, և որմէ կախ-
ուած է շափիղայի նուրբ լարով մը ճակտին մէջել
ծածկելով՝ ահագին բերուզակ մը:

Պարեգօտին առաջ պիտի բառնայ մանկաւիկ մը
անգլիական զինանշանով. վասնզի Մարդարիտ՝ Վէք-
սէնի կոմսուհին, Անդլոյ թագաւոր Հանրի Բ.ի
որդւոյն՝ Հանրի Գուրի-Մարդէին որբեարի կինն է:

Անդոնիա հրաշագեղ էր այդ հագուստով որ
որպանչելապէս իրեն կ'վայելէր, այն արբայաշուք չնոր-
հովն և յետին ծայր վայելուշ զիսի դիրքովը.

— Կեցցես, սիրելիս, վառաշուք կերպարան մ'ու-
նիս, լսաւ Ալդէյնսդէյն իշխանուհին անցնելով, որ
դեռ վերջին արարին հագուստովն էր — հրաշալի
տպաւորութւին մը պիտի ընես . . . : Ահա կ'տեսնեմ
այն անուանի բերուզակն որու վրայ այնքան վայ-
րահաշութիւններ կ'ընեն . . . : Ես բնաւ չարաշուք
բան մը չեմ տեսներ անոր վրայ . . . բայց ուր է
ամուսինդ: Ո՛չ . . . ասոր համար չեմ ըսեր . . .
յարեց նա ծիծաղելով և Նէ օնտօրփ կոմսը ցոյց տա-
լով, որ նոյն միջոցին կարծեց թէ զինք կ'կոչեն, և
սկսաւ ծանր ծանր յառաջանալզինուց շատաշմամբ:
Իրօք յոտից ցգլուխ երկաթով պատած էր մարմինը,
վասն զի ինքն ևս վերջին պատկերին մէջ պիտի
երեէր:

— Ո՛չ, այս ամուսնոյդ վրայ չեմ խօսիր . . . շա-
րունակեց իշխանուհին, այլ կ'ակնարկեմ Հունգա-
րիոյ բարեբազր թագաւորին որու հետ երկորդ ա-
մուսնութեամբ պիտի միանաք . . . մի', մի պաստէք
ձեր ունքն, ցասկոտ ասպետ . . . ուր է նայինք, Պէ-
լան. վախնամ պիտի ուշանայ: Թո՞ղ երթան փնտ-
ուեն զինքն իր օթեկին մէջ: Վազուց պատրաստ լի-
նիլ պարտաւոր էր . . . :

Բայց օթեակը պարապ է: Անդ է միայն հագուստն
որ իրեն կ'սպասէ: Պէլա դեռ ևս տարակայ է, և մեծ
զարմանը կ'պատճառէ այն պատանիներուն որոց
սոյն հանդերձատունն յատկացած էր: Ի՞նչպէս զանց
ըրաւ իմացնել թէ չպիտի ներկայ գտնուի, եթէ ան-
հանդիսատ է, եթէ ո և է արգելք մը պատահած է:
Բայց զարմանքը կ'աւելնայ: Սպայակոյտի զօրական

մը՝ որ Ալուէրդ արշիղքսին թիկնապահն էր, դալով
կ'պատմէ թէ՝ Լոմանի՝ իր սիրական Սղէլլօ ձին հեծ-
նելով՝ Պրուքի բանակն առանց հրամանի թողեր
գացեր էր առաջի իրիկուն և այն ժամանակէն ի վեր
չէր զ արձեր . . . : Բանակին ընտրելագոյն մի սպա-
յին կողմէ այսպիսի տարակայութիւն մ'անմեկների
է և արտասովոր ենթադրութեանց տեղի կ'տայ:
Անցուցո լոկ գիպուածի մը կարելի է վերագրել
այսպիսի անպատճհութիւն մը: Անդ ոնիս վշտակի
նախազդացում մը կ'ունենայ և իր սրտին բախում-
երը կ'աւելնան: Սակայն կ'յաջողի նէ իր այլայլու-
թիւնը սրողել:

«Բնդ հակառակն՝ յուսանք, ըսաւ իշխանուհին, որ
այս խորհրդաւոր տարակայութիւնն օրին մէկն պիտի
բնապէս պարզուի: Բայց այժմ՝ մեղի անվրէպ Հուն-
գ արիոյ թագաւոր մը կարելոր է: » Ապա պատահի մը
տեսնելով որ առաջին պատկերին մէջ երեցեր էր
և զրեթէ Լոմանի հասակն ունէր, շուտ մը կ'հրա-
մայէ անոր որ երթայ հագնի բացակային հագուստը:
Առանց սպասելու անոր վերագարձին՝ կ'սկսին իսկոյն
պատկերին անձերը համախմբել:

Նոյն պահուն՝ պայիկ մը Եէօնտօրֆ կոմսին նամակ
մը կ'բերէ: Կոմսը պահարանը կ'պատուէ և կաղի
մը լամբարին կ'մօտենայ որ կարդայ պարունակը:
Դիտող մը կրնար նշարել անոր մի սարսուռը:
Բայց կոմսն ինքինք կ'զսպէ և խմբին մէջ պաղ-
արիւնով իր տեղը կ'բռնէ: Սակայն նոյն պահուն
չմոռնար անբացատրելի ակնարկ մը նետել կոմսու-
հւոյն վրաց:

Քանի մը լուպէ ետք՝ վարագոյրը կ'սկսի ծանր
ծանր վեր ելնել:

Անդ ոնիս կամ լաւ ևս Մարգարիտ իշխանուհին
տեսարանին աջ կողմը կ'գտնուէր. իր շուրջը պար-
րունած էին պատուակալ տիկիններ և ֆրանսացի
ասպետներ՝ իբրև իր հետեւորդներն, և առաջին
կարգին վրայ՝ աչքի կ'զարնէր իր բարձր հասակով և
ազնուապետական դէմքովն Եէօնտօրֆ կոմս՝ շքե-
զապէս սպառազէն: Թատրոնին խորն Հունգարիոյ
թագաւորն՝ Պէլա Գ. իր գահէն վար կ'իջնէր որ դի-
մաւորէ իշխանուհին, մինչդեռ դեռատի աղջկանց
խումբ մը կ'յառաջանային որպէս զի նէրա ծաղիկ-
ներ նուիրեն: Թագաւորին շուրջը շքազդեստ դրա-
նիկներ կարգաւ շարուած էին, նոյնպէս արևելքան
հագուստով երաժիշտներ որ տարօրինակ նուազա-
րաններ կ'կրէին:

Այս շողշողուն դինուց և գունագեղ ու ակնախտիզ
կերպամներու խառնուրդն փառահեղ տեսարան մը
կ'ընծայէր: Անդ ոնիս՝ իր գեղածիծաղ դէմքով և
շնորհալի ու ազնուաչուք դիրքով կանգուն՝ անհուն
տալաւորութիւն մ'ազդեց: Խոկոյն իր ճակտին վրայ
կրած բերուզակն ամենուն աշաց կէտ նպատակին
եղաւ և շփոթ փափսուք մը զբգուեց սրահին ամեն
կողմը: Օդին մէջ կ'սաւառնէր բնազդային այլայլու-
թիւն մը և անիմանալի երկիւզ մը, որպէս թէ ար-
տասովոր դէսլ մը պիտի պատահէր: Ուստի կարծես
թէ ամենուն սրահն վրայէն ծանր բեռ մ'ելաւ՝ եր-
բոր վարագոյրը գալարելով սկսաւ վար իջնել: Ահա
այն ժամանակ միայն ծափերն որոտացին ցնծազին

և մոլեգին կայթիռններ լսելի եղան։ Ոգեսրութիւնը
ծայրագոյն աստիճանին հասեր էր։

Անկարելի էր երկրորդ անգամ մ'ես հասարակու-
թեան աշաց առջև չդնել տեսարան մ'որ զայն այն-
քան ողերեր ու հայեր էր։ Ուստի վարագոյրն՝ որ
նոր վար իջեր էր, վերստին կ'բացուի։

Բայց այն կարձ միջոցին՝ երր խումբն հանդիսա-
տեսներուն աչքէն անտես մնացեր էր, Անդոնիա
յետուստ լսեց ձայն մ'որ հարցում մը կ'ուղղէր
այնպէս որ չլրցաւ հասկնուլ։ Այն ժամանակ ուրիշ
ձայն մը, որ իրեն ծանօթ էր, որ իր ամուսնոյն ձայն
էր և կարծես յատուկ դիտմամբ այնպէս կ'հնչէր որ
նէ արտասանուած բառերը լիովին լսէ, պատասխա-
նեց առաջին ձայնին։

— Իմ Օթի դղեկիս մատակարարին մի նամակն է
որ տիսուր լուր մը կհաղորդէ ինձ . . . : Լուսնիի
մարմինը գտեր են, ինչպէս նաև իր ծիռնը, միասին
խղղուած Դանուր գետին մէջ և Հէնպուրկի առաջ՝
աւազուտ կղզիի մը վրայ մղուած . . . :

Նոյն պահուն կիսովին բացուած էր վարագոյրը՝
ի տես բերելով պատկերին գերասաններն, որ ան-
շարժութեան մէջ ընկած էին։ Յանկարծ Անդոնիայի
դէմքը՝ շպարին թեթե խաւին ներքեւ, սոսկալի կեր-
պով կ'գունատի, իր երկու ձեռներն անպատում
ցաւակցութեամբ իր կուրծքին վրայ կ'զնէ և գետի-
նը կ'ընկնի ծանրապէս։

Այս անկամամբ՝ շուշանն որով կցուած էր իր քողը
գլուխ կ'քայուի և թատերաբեմին վրայ կ'գլորի
. . . : Այն ժամանակ՝ ձակտին միջև՝ ճիշտ այն տեղն

ուր դրուած էր բերուզակն՝ կլոր արատ մը կ'երեւ
արիւնաներկի։

Սրահին մէջ բոլոր հանդիսականները սոսկալով
ահագին աղաղակ մը կ'արձակեն . . . : Ամենքն ուռք
ելեր էին և տենդային շարժումով դէպ առաջ կը
ծուէին. . . : — Անիծեալ քարը — գոչեց Շէօնտօրփ
կոմսը և սրանալը ընդ առաջ, ոտքը բերուզակին
վրայ դրաւ և իր երկաթեայ կրուկին ներքեւ փշեց։

Վարագոյրն իջաւ անհնարին շփոթութեան մը
մէջ։ Անմիջապէս կ'փութեան կարևոր խնամքը չուայլել
կոմսուհւոյն, բայց բոլորովին ի զուր . . . : Մեռած
էր նէ, անյարիր մեռած։

Բժիշկներն՝ որ գերբնային բաներու հաւատ չունին,
այս շանթահարական մահն բացատրելու ելան ըսե-
լով թէ պատճառը սրտի երակի մը խզումէն է։ Խոկ
արիւնալի արատն ուրիշ բան չկրնար լինիլ ըստին, ե-
թէ ոչ ճմլած խոց մը՝ որ երկու երեք օր առաջ կոմ-
սուհւոյն ճակտին վրայ կարծը առարկալի մ'ընդհա-
րումէն յառաջ եկած է, զիապուած՝ որու մասին
կոմսը հաստատապէս կ'յայտարարէր թէ բնաւ տե-
ղեկութիւն չունէր։

Միւս կողմէ՝ ընկերական ցըսաններու մէջ գտնուե-
ցան մարդիկ որ բազզատեցին այս աղէտն Լուսանիի
եղերական մահուան հետ՝ որոց լուրը միւսնոյն ժամա-
նակ առին, և որ նորատի սպային մահուան խորհըր-
դաւոր պարագաներէն, իր մարմինը զտնուած գե-
ղէն տարօրինակ հետեւթիւններ հանեցին և կիսա-
ձայն ու գտղոնուզաղի մեկնութիւններ սկսան տալ
վիշնական որահներու մէջ։

Բայց այդ բացառութիւն մ'էր: Հասարակութեան
մեծ մասը համոզուած մնաց—և ըստ երևոյթին, այս
էր նաև կարծիքն Շէօնտօրֆ կոմսին որ անմիտիթ-
րելի մնաց իր կնոջ մահուն վրայ և ճիշտ ինքոյինք մե-
ղալարտ նկատեց այն դժնդակ գոհարն իրրե ըն-
ծայ նուիրելուն —թէ Անդոնիա կոմսուհին զոհ ըն-
կած էր կոյր ճակատազդրին որ անբաժան էր անի-
ծեալ քարէն, այն առլէզ—բերուզակէն, և որ ա-
հոելի մահուան կ'դատապարտէր այդ քարով զար-
դարուելու յանդ գնող բոյոր կանալքն:

Բարեբաղդօրէն, կյարէին ասոնք, այլ ևս ոչ զրք
պիտի սպաննէ:

460



3. 203. 09

የኢትዮጵያ ሥነ

2365
2366
2367
2368

ՀՀ Ազգային գրադարան



NL0627774

ՀՀ Ազգային գրադարան



NL0627775

ՀՀ Ազգային գրադարան



NL0627776

ՀՀ Ազգային գրադարան



NL0627777



